

N. Thika

for My...
M...

ՌԱՍՏ ԺՈՂՈՎ ԵՐԿՈՒ ՀՈԳԱՍԱՐՁՈՒԹՅԱՆՑ

Ս.Սահակ Ս.Մեսրոպ Եկեղեցւոյ ի Ռէտա, Ս.Սրբորգութիւն Եկեղեցւոյ ի Նօրթ
Յունիս 11, 1951.

Ժողովը բացուեցաւ Առաջնորդ Սրբազան Հօր ազօթքով եւ նախագահութեամբ, ժամը
9.30-ին Ս.Մ. Ռէտա Ծիլատելիոյ սրահին մէջ:

Ս.Սահակ Ս.Մեսրոպ Եկեղեցւոյ լրիւ կազմը ներկայ էր, Հոգ-Հովիտ Տէր Լեւոն Փահանայ
Հօր գլխաւորութեամբ: Ս.Սրբորգութիւն Եկեղեցւոյ կազմէ ներկայ էին Երեսփոխաններ,
Գրնք. Կ. Բնէէեան, Գ. Սէմէրճեան, եւ Հոգաբարձուներ Տօթ. Լ. Սարգսրեան, Գ. Բարուսակեան,
Ռ. Ժամկոչեան:

Ժողովը շատ սիրալիբ մթնոլորտի մէջ նկատի առաւ կարգ մը փոխ-յարաբերու-
թեանց խնդիրներ: Տէր Լեւոն Հայր շեշտեց կարեւորութիւնը իրարհասկացողութեան,
համագործակցութեան, կարգ ու կանոնի, եւ Եկեղեցական "Տիտիփլին" ի մը անմիջական պահան-
ջին, երկու Եկեղեցիներու ալ յառաջդիմութեան համար:

Ժողովը նկատի ունենալով որ այս պահանջը միշտ ալ զգալի եղած է, առկէ
առաջ ունեցած է նման հանդիպումներ, որոնց արդիւնքը եղող որոշումները սակաւ
զօրութեամբք անսես առնուած են եւ չ'զարմարուած:

Նախագահ Սրբազան Հօր թիլադրութեամբ, եւ ժողովականներու հաւանութեամբ
կարդացուեցաւ Մարտ 6, 1948-ին գումարուած խառն ժողովին որոշումները, որոնցմէ
հետեւեալ մասերը ընդունուեցան, եւ վաւերացուեցան բարեփոխութիւններէ եւ կարգ
մը յանելումներէ ետք:

1.- Երկու Հովիտներն ու Հոգաբարձութիւնները իրենց զօրժուելութիւնները
սահմանափակեն իրենց զօրժուելութեան շրջանին մէջ միայն: Սակայն
ոեւէ մեծ կամ ընտանիք ^ի պնդէ ոեւէ կազմին պատկանիչ, այդ մասին
առարկութիւն չ'ընել:

2.- Երկու Եկեղեցիներու Միական սահմանը Սրբալծի գծաը կը նկատուի.
Գետին մէկ կազմը, մէջն ըլլալով Ըրքքը Տարգի, Տրէտուլի Հիլ, եւ շրջան-
նեաը եր սասանին Ռէտա Ծիլատելիոյ: Եկեղեցւոյ,
Գետին միւս կազմը, Քէմաըն եւ իր շրջանները միասեղ, կը պատկանի Նօրթ
Ծիլատելիոյ Եկեղեցւոյ:

3. — Խորհրդակատարութիւններ խնդրող անհատներ պէտք է գիմեն իրենց շրջանին
Հովիւին կամ Հոգարարութեան՝ Մէկ Մուխէն միւս Մուխը գացող անհատմը
Խորհրդակատարութեան համար պէտք է թելագրուի նախ գիմել իրեն պատկանած
Նկեղեցիին։ Եթէ ենթական յամառի, այն ատեն երկու կողմի Հովիւներ իրար
մէջ պէտք է բարեւոք կարգադրութեան մը գան, շանալով հաւատարիմ մնալ
սահմանային սկզբունքին։

4. — Հարսանիքի պարագային եթէ Ուետտի անգամ մը փախքի Նորթհի Սրահը վարձել
եւ Նկեղեցին գործածել, այն ատեն Նկեղեցիի գործածութեան համար ոչինչ
պիտի վճարէ։ Սակայն երբ կուզէ միայն Նկեղեցին գործածել, առանց Սրահը
վարձելու, այդ պարագային 15.00 Յուլար պարտի նուիրել։

5. — Երկու Նկեղեցիներն ալ կարեւոր ձեռնարկներու օր որոշելէ առաջ պարտին
իրար հասկացողութեան գալ, զիրար շխաշածեւելու համար։

6. — Երկու Նկեղեցիներուն Իրաւասու անգամներու ցանկէ, պէտք է փոխանակուին
իրարու հետ։ Ս. Մնդեան, Ս. Չառկի եւ այլ մեծ տօնական օրերու պարագային
սակայն մէկ Նկեղեցիէն միւսին յայտարարութիւններ պէտք չէ զրկուին։

7. — Առաջին Մուխէն երբ ընտանիք մը փոխադրուի երկրորդ Մուխը — Ուետտէն
Նորթհի, կամ Նորթհէն Ուետտ — Առաջին Մուխին Հովիւը պարտի տեղեկացնել
երկրորդ Մուխի Հովիւին, եւ փոխադարձաբար։

8. — Երկու Հովիւներն ու Հոգարարութիւնները, աշխարհագրականօրէն իրենց
բաժին ինկած սահմաններուն մէջ, Նկեղեցական եւ կազմակերպչական գործ
կատարելու ազատ են, առանց սակայն բանարարելու անհատներու ազատ կամքը
եթէ անոնք կը փախքին կառուած մնալ այս կամ այն Նկեղեցիին։

Ժողովը վերոյիշեալ յօդուածներուն շուրջ համաձայնութիւն գոյացնելէ ետք,
փախք յայտնեց որ տարին անգամ մը զէթ, նման խառնժողովներ գումարուին, ձեռ-
նարկներ տրուին, Նկեղեցական պաշտամունքներ ըլլան։ Այս բոլորը պիտի ծառայեն
Նորթհի եւ Ուետտի միջեւ մտերմական կապ մը հաստատելու եւ սիրոյ մթնոլորտ
մը ստեղծելու։

Ուետտի Նկեղեցւոյ շինութեան գալով, Ս. Երրորդութիւն Նկեղեց-
ւոյ ներկայացուցիչները պտորաստակամ գանուեցան ամեն կերպով օգտակար հանդիս-
կալ, երբ օգնութեան կոչ մը ըլլալ իրենց։ Ժողովը փակուեցաւ Սրբազան Հօր աղօթքով
ժամը 11:30-ին։

ԱՅՆԱԳՅՆ *[Signature]* *[Signature]* *[Signature]*

Սիրելի անդամներ,
 ներկայ Անդամական ժողովին ներկայացուած այս տեղեկագիրը պիտի պատկերացնէ Նօրթ Թիլատալիոյ Ս. Երրորդութիւն Հայց. Եկեղեցւոյ կեանքը Ապրիլ 1952 Դեկտեմբեր, Հոգ. Տ. Բաբգէն Վարդապետի եւ մեր Հովուութեան շրջանին:
 Օգոստոս ամսու մէջ Առաջնորդ Սրբազանը հարկ տեսաւ Թրոյ նիւ Եօրթի Ս. Պետրոս Հայց. Եկեղեցւոյ Հովիւ Նշանակել Տ. Բաբգէն Վարդապետը, եւ ատոր առջնաբարձ Կեդրոնական Վարչութեան հետ միասին նկատի առնելով զանազան պայմաններ, համաձայն գտնուեցաւ որ ստանձնենք Ս. Երրորդութիւն Հայց. Եկեղեցւոյ Հովուական պաշտօնը, նոյն ատեն կատարելով Առաջնորդական Փոխանորդի եւ Առաջնորդարանի Տեղեկատու Դիւանի պարտականութիւնները: Եւ այս պատասխանատուութիւններուն լիովին հասնելու համար որոշուեցաւ Տեղեկատու Դիւանի գրասենեակը փոխադրել Թիլատալիա եւ օգնական Հովիւ Նշանակել Տ. Արտէն Բաճանան:

Եկեղեցւոյ Հովուական, Հոգաբարձական եւ Վարչական գործերը յառաջ տարուած են լաւագոյն կարելիութիւններով:
 Միական այցելութիւնները Հովիւներու կողմէ կատարուած են կանոնաւորաբար: Հոգ. Տ. Բաբգէն Վարդապետ Ապրիլէն Օգոստոս կատարած է 158 այցելութիւններ ընտանիքներու, 12 այց հիւանդներու: Տ. Արտէն Բաճանան, Օգոստոսէն Դեկտեմբեր, կատարած է 925 այցելութիւններ, 275 ընտանիքներու, 26ը հիւանդներու, 24ը մեզի հետ միասնաբար: Իսկ մենք նոյն շրջանին կատարած ենք 166 այցելութիւններ ընտանիքներու, եւ 9ը հիւանդներու: Տնօրհնէքի Կարգը կատարած է Տ. Բաբգէն Վրդ. այցելելով 113 տուներ:

Սկրտութեան Խորհուրդը մատակարարուած է 20 անձերու, Մայիս 4էն Դեկտեմբեր 28, վկայագիր թիւ 228-247: Ասոնցմէ 9ը մինչեւ Յրեք տարեկան, 8ը երեքէն տասը տարեկան, 9ը 11-25 տարեկան:
 Ամուսնութեամբ պսակուած են 10 զոյգեր: Իսկ մահուամբ կորսնցուցած ենք հինգ անդամներ:

Մեր Եկեղեցւոյ իւրաքանչիւր անդամի ծննդեան տարեդարձի առիթով շնորհաւորական քարտեր ղրկուած են, թիւով 152 անձերու: Նոյնպէս շնորհաւորական նամակներ ղրկուած են մեր անդամներու ամուսնութեան տարեդարձի առիթով, թիւով 148: Իսկ Տ. Արտէն Բաճանան նոյեմբեր ամիսէն սկսեալ շնորհաւորական նամակներ խմբագրած է մեր անդամներու անունի տօնախմբութեան առիթով եւս, երբ ըստ Եկեղեցւոյ Օրացոյցի նոյն անունը կրող սուրբին յիշատակը կը տօնուի Եկեղեցւոյ մէջ: Այս շնորհաւորական նամակին կցուած է նաեւ կարճ կենսագրականը նոյն սուրբին: Մինչեւ հիմա 52 անձեր ստացած են սոյն շնորհաւորական նամակէն:

Այս բոլոր ծրագիրները իրագործել կարելի եղած է օժանդակութեամբ մեր Եկեղեցւոյ երիտասարդ զաւակներուն, որոնք իրենց կարողութեան չափով կատարած են գրասենեակի, մեքենագրութեան եւ ցրուումի աշխատանքները: Մասնաւոր գնահատանքով պէտք է յիշատակել Օրթ. Աղաւնի Բարունակեան, Ազապի Պուրնազեան, Պէթի Եազեան, Պէթի Պորոյեան, Պէթի Սանթրըեան, Ժընէվ Բարունակեան, Պերճուհի Յարութիւնեան եւ ուրիշներ:

Հոգեւորականաց Ամառնային Հաւաքոյթին, որ գումարուեցաւ Պինկհէմթընի մէջ, Յուլիս 21-26, մասնակցած է Տ. Բաբգէն Վրդ., իսկ Սեպտեմբեր ամսու սկիզբը Ուստրի մէջ գումարուած Հայց. Եկեղեցւոյ Երիտասարդաց Կազմակերպութեան վեցերորդ տարեկան համագումարին մասնակցեցաւ Տ. Արտէն Բաճանան:

Ուէսթ Թիլատալիոյ Ս. Սահակ-Մեսրոպ Հայց. Եկեղեցւոյ հետ միացեալ ձեռնարկներ ունեցանք հետեւեալ թուականներուն.-

Նոյեմբեր 16ին մեր Եկեղեցւոյ Հովիւը, սարկաւազը եւ Դպրաց Դասը Սուրբ Պատարագ մատուցին Ուէսթ Թիլատալիոյ Ս. Սահակ-Մեսրոպ Եկեղեցւոյ մէջ, իսկ նոյն Եկեղեցւոյ Հովիւը, սարկաւազը եւ Դպրաց Դասը Ս. Պատարագ մատուցին մեր Եկեղեցւոյ մէջ: Նոյն կէսօրին, Հովիւները, երկու Դպրաց Դասերը եւ Հոգաբարձութեանց Ատենապետները միասին ճաշելէն յետոյ, երեկոյին մասնակցեցան Հայ Մշակոյթի Օրուան առիթով կազմակերպուած հաւաքոյթին: Ատենախօսն էր Տ. Արտէն Բաճանան:

1952 ՏԱՐԵԿԱՆ ՏԵՂԵԿԱԳԻՐ

Դեկտեմբեր 25ին, Ս. Ստեփանոսի եւ Քրիստիտի առիթով մեր Եկեղեցւոյ մէջ Ս. Պատարագ մատուցուեցաւ, մասնակցութեամբ Ս.Սահակ-Մեսրոպ Եկեղեցւոյ: Իսկ Յունուար 6ին նոյն կերպով Ս. Պատարագ պիտի մատուցուի Ուէսթ Ֆիլատելիոյ Եկեղեցիին մէջ:

Մասնաւոր յիշատակութեան արժանի կը նկատենք մեր Եկեղեցւոյ երկու անդամները, որոնք մեր թելադրութեան անսալով իրենց կտակները պատրաստած եւ բաժին հանած էին թէ՛ Ֆիլատելիոյ Ս. Երրորդութիւն շայնք. Եկեղեցւոյս եւ թէ՛ Մայր Եկեղեցւոյ Ծինութեան: Հանգուցեալ այդ անդամներն են Յովակիմ Տօնիկեան եւ Ճօրճ Փափազեան, որոնք 500ական տոլար յատկացուցած են վերոյիշեալ նպատակներուն:

Եկեղեցւոյ մէջ գործող կազմակերպութիւններու տեղեկագիրներէն կը քաղենք հետեւեալը.-

ԵԿԵՂԵՑԱՍԷՐ ՀԱՅՈՒՆՆԵՐՈՒ ՄԻՈՒԹԻՒՆ

Հայուհեաց Միութիւնը ունեցած է ութը անդամական եւ 14 վարչական ժողովներ: Իբրեւ Հոգաբարձութեան օժանդակ մարմին ստանձնած է Անդամական ժողովներու եւ զանազան հաւաքոյթներու առիթով ճաշի պատրաստութիւն:

Միութիւնս սարքած է հասութեան հինգ ձեռնարկներ, Միջինքի, Չատկի հակաթխադի, Համբարձման Վիճակի, ամառնային դաշտահանդէսի եւ աշնան երեքօրեայ պազարի անուներով: Անդամական ժողովները կը սկսին ճաշով, որ ամէն ամիս Միութեանս համար կ'ապահովէ փոքրիկ հասոյթ մը եւս:

Անդամներու արձանագրուած թիւն է 168, որոնցմէ 97-ը վճարած են իրենց անդամատուրքը:

Միութեանս գործունէութեան մաս կը կազմէ հիւանդաց եւ մխիթարութեան կարօտ ծխականներու այցելութիւն: Տիկնայք Ս. Քիւփէլեան, Մ. Զիրքիսեան, Մ. Օհանեան եւ Ե. Պուռնազեան Մարտէն մինչեւ Դեկտեմբեր կատարած են 40 այցելութիւններ եւ ղրկած են 10 քարտեր:

Հաւաքոյթներու առթիւ գեղարուեստական բաժին կը հայթայթէ Միութեանս գեղարուեստական յանձնախումբը, գլխաւորութեամբ Տիկին Ա. Վարդանեանի: Իսկ անդամական ժողովներուն մէջ իւրաքանչիւր անդամուն անդամներէ՞ք մէկը պիտի ջանայ նիւթի մը մասին խօսիլ կամ կարգալ ներկաներուն: Այս փորձը ըրին Տիկ. Ա. Մալումեան՝ Մշակոյթի Օրուան առիթով, եւ Տիկին Փ. Նազարեան, ներկայացնելով Փառանձեմ թագուհիի կեանքը:

Ծնունդի առթիւ Միութիւնս մեր ծուխէն զինուոր մեկնած տղոց ղրկած է նուէրներու ծրարներ:

Միութեանս վարչութիւնը կազմաուած է ըստ հետեւեալին.- Տիկնայք՝

- Անժէլ Մեծիկեան, Ատենապետ
- Անժէլ Երէցեան, Փոխ ատենապետ
- Նուարդ Հայկազեան, Ատենադպիր
- Զարմինէ Ալեքսանեան, Փոխ ատենադպիր
- Վիթթօրիա Ղազիկեան, Գանձապահ
- Եղիս Տէր Օհաննէսեան, Խորհրդական
- Աստղիկ Գրմազմեան, Խորհրդական
- Էլսի Բարնակեան, Խորհրդական
- Վարդանուշ Աթթարեան, Խորհրդական
- Սիրվարդ Զաքարեան, Խորհրդական
- Տորոթի Զալըքեան, Խորհրդական

1952 ՏԱՐԵԿԱՆ ՏԵՂԵԿԱԳԻՐ

Հայուհեաց Միութիւնը, բացի պազարէն, իր միւս եկամուտի աղբիւրներէն գոյացուցած է 831:34 Տոլար: Պազարին զուտ շահը մօտաւորապէս Երեք հազար Տոլար է 5 Ընդհանուր/Ելքն է 904:29 Տոլար:

ԴՊՐԱՑ ԴԱՍ

Դպրաց դասի վարչութեան անդամներն են.-

- Ճան Արսլանեան, ատենապետ
- Փիթըր Ալեքսանեան, փոխ ատենապետ
- Հելըն Պասմաճեան, ատենադպիր
- Պէթի Պորոյեան, թղթակցող քարտուղար
- Ալիս Արսլանեան, գանձապահ
- Անահիտ Զալըզեան, խորհրդական
- Սառա Մեծիկեան, խորհրդական
- Մինաս Մալումեան, պատուոյ անդամ
- Աղաւնի Բարունակեան, պատուոյ անդամ

Դպրաց դասը իր փորձերը կ'ունենայ ամէն Հինգշաբթի զիշեր, ղեկավարութեամբ Օր. Աղաւնի Բարունակեանի եւ Պերճ Երէցեանի, որոնք փոխն ի փոխ կը կատարեն դպրատնութիւնը: Երգեհոնահարներն են Տիկին Տեսքուհի Աթթարեան եւ Օր. Ժընէվ Բարունակեան: Օր. Աղաւնի Բարունակեան նաեւ կը մարզէ կրտսերաց դպրաց դաս մը Կիրակնօրեայ դպրոցին մէջ, եւ քանիցս կրտսերները մասնակցած են Ս. Պատարագի երգեցողութեան, շապիկ ալ հազնելով: Իսկ Պերճ Երէցեան կը մարզուի սարկաւազի երգեցողութեան մասնակցելու համար:

Դպրաց դասը ունեցած է 5 անդամական եւ 2 վարչական ժողովներ: Ունի 11 այր եւ 20 կին անդամներ:

Բաց ի Կիրակի օրուան Ս. Պատարագի երգեցողութենէն, դպրաց դասը եկեղեցույս մէջ կատարուած Ս. Պսակներուն բերած է իր մասնակցութիւնը: Գերափոխման տօնի Բարեկենդանին Ազպըրի Փարթի Յունական եկեղեցիի մէջ կատարուած արարողութեան եւ խողովօրհնէքին մասնակցած է: Հայ Մշակոյթի տօնին առթիւ երգած է Ուէսթ Կիլատէլեիայի Ս. Սահակ-Ս. Մեսրոպ եկեղեցույ մէջ, եւ նոյն օրը յիշեալ եկեղեցույ դպրաց դասին եւ երկու եկեղեցիներու հովիւներուն եւ հոգաբարձութեանց ատենապետներուն հետ միասին ճաշ ունեցած է:

Պատգամաւորներ ղրկած է Դպրաց դասերու կազմակերպութեան տարեկան համաժողովին, Ռէսիւնի մէջ:

Դպրաց դասը ունեցած է մուտք 226.76 Տոլար, ելք 356.64 Տոլար: Նախորդ տարեշրջանէն փոխանցած ըլլալով 239.56 տոլար, այժմ գանձին մէջ ունի 109.68 Տոլար:

ՀԱՅ ԵԿԵՂԵՑԻՈՅ ԵՐԻՏԱՍԱՐԴԱՑ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԻՒՆ
Կազմակերպութեան ներկայ վարչութիւնը, ընտրուած Յունիս 17-ին, կազմուած է ըստ հետեւեալին.-

- Ալիշան Հայկազեան, ատենապետ
- Մարթին Զուլիկեան, փոխ ատենապետ
- Մէրի Մազմանեան, ատենադպիր
- Ժընէվ Բարունակեան, թղթակցող քարտուղար
- Սառա Բարունակեան, գանձապահ
- Լիւսի Կիւրեղեան, հաշուապահ
- Մարիա Տանտիկեան, վարիչ ծանուցումներու
- Աշխէն Ալահվերտեան, խորհրդական
- Արամ Աղազարեան, խորհրդական

1952 ՏԱՐԵԿԱՆ ՏԵՂԵԿԱԳԻՐ

Ունեցած է 10 անդամական եւ 9 վարչական ժողովներ:

Կը գործէ երէցներու եւ կրտսերներու երկու բաժիններով: Կրտսերներու թիւն է 18. Երէցներու թիւն է 56:

Անձեռնմխելի գումար ունին 3132.50 Տոլար:

Կազմակերպութիւնը օժանդակած է Հոգաբարձութեան, Դաշտահանդէսի եւ Պազարի աշխատանքներուն մէջ: Կը հրատարակէ ամսաթերթ մը, Խաչակիր անունով, զոր ձրի կը ղրկէ մեր ծուխի բոլոր ընտանիքներուն: Քըրիսմըսի առիթով ծախած է շնորհաւորական քարտեր: Օգոստոսին սարքած է մեծ պարահանդէս մը եզպլորի Փարիի մէջ, խաղողօրհնէքի նախընթաց գիշերը: Սեպտեմբեր ամսուն, բարի գալուստի թէյասեղան մը սարքած է զոյգ հովիւներուն եւ անդամներուն համար: Հոկտեմբերին Տիար Գասպար Կարապետեանի բնակարանին մէջ կազմակերպած է պարահանդէս մը: Շնան, ամիսը երկու անգամ սարքած է դաստիարակչական երեկոյթ, հրաւիրելով դասախօսներ, ինչպէս Տիկին Ազնիւ Նէտիւրեան, Կեդրոնական եւ Հարաւային Ամերիկա պոռոյտի մը մասին, ձէք Կուշեան, "Հայերը անբաղձալի" նիւթին շուրջ, Օր. Պէթի Քէլեան, "Հայերը ներկայիս" նիւթի մասին, եպիսկոպոսական հովիւ Վեր. Ճան Թրէլիվըն, "Ս. Մնունդի պատրաստութեան" մասին: Այս առիթներով օգնական հովիւ Տ. Արտէն Քհնյ. կարճ ծանօթութիւններ տուած է Հայ եկեղեցական այժմէական կարգ մը հարցերու շուրջ, ինչպէս, "Ջատկի թուականը ճշդելու կերպը", "Կեդրոններ Հայ եկեղեցականներ պատրաստելու", "Կնքահայրեր եւ անոնց պատասխանատուութիւնը": Քըրիսմըսի գիշերը խմբական երգեցողութիւն կատարած է տունէ տուն պոռոյտով:

ՀԱՅ ԴՊՐՈՑ Ս. ԵՐՐՈՐԴՈՒԹԻՒՆ ՀԱՅՑ. ԵԿԵՂԵՑԻՈՅ

Հայ դպրոցի խնամակալութեան անդամներն են, Տիկնայք՝
Արշալոյս Մալումեան, ատենապետ
Թագուհի Պասմաճեան
Սառա Ճաւեան
Օր. Հէլըն Եսայեան, գանձապահ

Աշակերտներու թիւն է 37, բաժնուած չորս դասարանի: Ուսուցիչներն են,

Օրբ. Աղաւնի Բարունակեան
Էլիզ Սամուէլեան
Ազապի Պուռնազեան
Տիկ. Թագուհի Պասմաճեան
Տիկ. Սառա Ճաւեան

Դասաւանդութիւնը շաբաթը մէկ պահ է, Կիրակի առաւօտ ժամը 10-էն մինչեւ 10.45: Դասագրքերն են Արարատ Ա. եւ Արարատ Բ.

Դպրոցի մուտքը եղած է 391.95 Տոլար, իսկ ծախքը 176. 84 Տոլ. ներկայիս գանձին մէջ կայ 215.11 Տոլար:

ՀԱՅ ԴՊՐՈՑ ՔԷՄՏԸՆԻ

Խնամակալութեան անդամներն են, Տիկնայք՝
Էլսի Բարնակեան, Ատենապետ
Արաքսի Մարգարեան, Ատենադպրուհի
Տիգրանուհի Պալտատեան, Գանձապահ
Ատրինէ Պէպիրեան, Խորհրդական
Արաքսի Տամրաճեան, Խորհրդական

Դպրոցը ունիւ 18 աշակերտներ. ուսուցիչն է Օր. Էլիզ Սամուէլեան:

Դասաւանդութիւնը կը կատարուի Ուայ.էմ.Սի.էյ-ի մէջ, շաբաթ օրը,
ժամը 11-էն 1: Դասագրքերն են Արարատ Ա. եւ Արարատ Բ.

Տարեկան պիւտճէն է 350 Տոլար: Մուտքը եղած է 464.17 Տոլար, իսկ
ելքը 345.40 Տոլար: Գանձին մէջ ներկայիս կայ 118.77 Տոլար:

ԿԻՐԱԿՆՕՐԵԱՅ ՎԱՐԺԱՐԱՆ

Վարժարանի ուսուցչակազմը հետեւեալն է.-

- Կարապետ Գրմազմեան, վարիչ
- Մարթին Զուլիքեան, Օգնական վարիչ
- Օր. Աղաւնի Բարունակեան, երգի դասատու
- Օր. Ագապի Պուռնազեան
- Օր. Ռոզ Օգուրեան
- Տիկ. Սառա Հացազործեան
- Տիկ. Մէրի Միլրաքեան
- Օր. Աշխէն Ալահվերտեան
- Օր. Մարգրիտ Բարունակեան
- Տիկ. Սոնիա Գրմազմեան
- Տիկ. Տորոթի Կուշեան
- Օր. Եսթեր Գազեան

Աշակերտներու թիւն է 85, բաժնուած 9 դասարանի:

Ուսուցիչները ամէն երկուշաբթի երեկոյ կ'ունենան ժողով եւ կը ծրագրեն
աւանդուելիք դասը: Այս տարի ուսման ծրագիրն է Ս. Պատարագի մանրամասն բացատրու-
թիւնը:

Քրիստոսի առիթով փոքրիկներուն համար հաւաքոյթ կազմակերպուած է,
եւ աշակերտներ տարուած են Ունամէյքըրի մէջ ներկայացուած «Սինտրելլա»-ի բեմա-
դրութեան:

Դասարանները յաջորդաբար ամէն Կիրակի Ս. Հաղորդութիւն կ'աւնեն, նախա-
պէս խոստովանելէ ետք:

Ութ մանչերէ կազմուած դասարան մը մասնաւորաբար կը դաստիարակուի մոմա-
կալութիւն ընելու Ս. Պատարագի ընթացքին:


Հետաքրքրութիւն ստեղծելու համար աշակերտներուն մէջ, փոքրիկներուն
բաշխուած է շաբաբեղէն եւ կրօնական երգիծական վատկերաթերթեր:

*Մտաւորական կեանքի զարգացումը, պատրաստութիւնը Ա. Երան
Կր. թիւն Հայր. Կեանքի, զարգացումը Գոթաւեան թիւն, Կո. Երանքի որ
Որ Կեանքի կուրսը կաւաճեալ յոյս ունի նոր կրօնական թիւն Ե.
Կեանքի թիւն Կեանքի կուրսը Կեանքի զարգացումը (եւ թիւն Կեանքի զարգացումը)
Թիւն կաւաճումը Գոթաւեան զարգացումը = Կեանքի որ Կեանքի որ Կեանքի թիւն
աւանդուած թիւն Հայր Կեանքի կաւաճումը թիւն կաւաճումը զարգացումը
Կեանքի:*

ԴԻՒ. 28.1952

Թորոթի Կուշեան

ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ԼԱՅՈՑ
ԱՄԵՐԻԿԱՅԻ



DIOCESE OF THE ARMENIAN
CHURCH IN N. AMERICA

Կր

Վ

N. Phila

630 Second Avenue
New York 16, N. Y.
Tel. LExington 2-5790

5 Յունիս 1952

Հոգեշնորհ
Տ. Բարսեղ Լազարյան Լաթաքիան
Հովիտ եւ Նախագահ Հոգաբարձութեան Ս. Երրորդութիւն Եկեղեցւոյ
ի Տիլանթիլիս.

Սիրելի Տ. Բարսեղ,

Հոգաբարձութեանց Մայիս 10 թուականը նամակը, որով մեզի
կը տեղեկացնէիք Եկեղեցւոյ ղեկավարական ժողովին կողմէ Հոգաբարձութեանց
զազարծալ անդամներուն տեղ նորնոր ընտրութիւնը, սաացած ենք:

Նկատի առնելով ընտրութեան հանգամանքները եւ անոր մեր
թեմական կանոնադրի համաձայն կատարուած ըլլալը, նկատի առնելով նաեւ
ընտրեալ անձանց արժանատրութիւնը, այսու կը վաւերացնենք Հոգաբարձութեանց
նոր անդամներու ընտրութիւնը եւ անոր կազմը ըստ հետեւեալին.


- Պարոն Մուշեղ Վիշապազուի
- " Գրիգոր Մեմիկեան
- " Տարն Զալբազեան
- " Տարն Գուշեան
- " Արա Պալքունազեան
- " Երուանդ Բարունակեան
- " Տէլեմար Պատմանեան եւ
- " Նազարէթ Լազարոսեան:

Կը մաղթենք Ձեզ եւ Հոգաբարձութեանց գաղութական անդամնե-
րուն կարողութիւն ի Տեառնէ եւ զշնորհա Սուրբ Հոգւոյն եւ գործունէութեան
արդիւնաւոր շրջան մը ի Հոգեւոր շինութիւն ժողովրդեան մերոյ որ ի Տիլա-
նթիլիս, Իլպայթաութիւն Սուրբ Եկեղեցւոյս եւ ի փառս Ամենակալին Աստուծոյ.
ամէն:

Հայրական սիրոյ ողջունիւ եւ օրհնութեամբ աղօթակից

Առաջնորդ Հայոց Ամերիկայի

ՀՈԳԱՍՄԱՐՈՒԹԻՒՆ
ՍԲ. ԵՐՐՈՐԴՈՒԹԻՒՆ
ՀԱՅՑ, ԱՌԱՔ. ԵԿԵԼԵՑԻՈՑ
Ե. ՖԻԼԱՏԵԼՅԱ, ՓԱ.



Holy Trinity
Armenian Apostolic Church
of N. Philadelphia, Pa.

PASTOR
VERY REV. PAPKEN VARJABEDIAN

Pastor's Telephone
STevenson 4-6807

S. W. Corner
Susquehanna Avenue & Marshall Street

Մայիս 10 - 1952

Գերաշնորհ
Տէր Տիրան Արք. ներսոյեան
Բարեխնամ Առաջնորդ Հայոց Ամերիկայի եւ
Նախագահ Պատժ. Կեդրոնական Վարչութեան

Գերապատիւ Սրբազան Հայր.

Ն.Ֆիլատելիոյ Ս.Երրորդութիւն Հայց. Եկեղեցւոյ Տարեկան Անդամական
Ժողովը տեղի ունեցաւ Մարտ 16-ին -1952- Եկեղեցւոյս Վարդանանց Սրահին մէջ:

- Սոյն Անդամական Ժողովի Օրակարգի նիւթերն էին:
- 1- Անդամներու իրաւասութեան ձշողում: 2- Դիւանի ընտրութիւն
 - 3- Հոգաբարձութեան գործունէութեան եւ Տնտեսութեան տեղեկագրի ընթերցում:
 - 4- Հովիւի զեկուցում 5- Ընտրութիւն Ընտրողական Յանձնախումբի

Որոշուեցաւ որ Հոգաբարձութեան դադարեալ եւ հրաժարեալ անդամներու ընտրու-
թիւնը կատարուի Ապրիլ 20-ին: Սոյն Ժողովին Ա.Պետ ընտրուեցաւ Տիար Կ. Ինճեան
իսկ Ա. Դպիր, Տիար Մ. Վիշապազուն:

Ընտրողական Յանձնախումբը, բազկացած հետեւեալ անձերէ, Տիարք Դ. Տէմիրճեան
Պ. Սէմէրճեան եւ Տիկ. Հ. Կարիպեան, Ապրիլ 6-ին պատրաստեցին եւ Հոգաբարձութեան
յանձնեցին 16 անուններէ բազկացած կրկնապատիկ ցանկ մը:

Ընտրելեաց սոյն ցանկը յարմար դատուեցաւ որ Մտկազարդի կիրակին, որ է ընտ-
րութենէն երկու շաբաթ առաջ յաւարտ եկեղեցւոյ բաժնուի բոլոր անդամներուն:
Սոյն այդ ցանկը ընտրութենէն երկու օր առաջ նամակատան միջոցաւ ղրկուեցաւ
իրաւասու անդամներուն, եւ Ապրիլ 20-ին յաւարտ Ս. Պատարագի ընտրութիւնը տեղի
ունեցաւ Եկեղեցւոյ Սրբոց Վարդանանց սրահին մէջ:

Կը ցաւինք ըսել որ ընտրութեան արդիւնքը մի քիչ ուշ կը տեղեկագրենք ձեզ-
թարկելու համար Ձեր Բարձր Սրբազնութեան եւ Պատուարժան Կեդրոնական Վար-
չութեանը, Վասնզի ընտրեալ հոգաբարձուներէն երկուքը հրաժարեցան, եւ յաջորդ
առաւելագոյն քուէ ստացողներու հաւանութիւնը մինչեւ որ ստանանք ժամանակ
կորսնցուցինք:

69 իրաւասու անդամներ քուէարկեցին յիշեալ ցանկին վրայ առաջարկուած ընտր-
ւիներուն, որոնցմէ Հետեւեալները ընտրուեցան:

Հանեցէք տեսնել Բ. էջը

- 1:- Տիար Մուշեղ Վիշապազուն
- 3:- ,, Գրիգոր Մեծիկեան
- 5:- ,, Երուանդ Բարունակեան
- 7:- ,, Պետրոս Սէմէրճեան

- 2:- Տիար Ճօրճ Զալգեան
- 4:- ,, Արամ Պուրնազեան
- 6:- ,, Ճօրճ Գուշեան
- 8:- ,, Մկրտիչ Ղազիկեան

Պրն. Պետրոս Սէմէրճեան հրաժարեցաւ, եւ յաջորդ առաւելագոյն քուէ ստացո -
 ող, Տիար Տելեմաք Պասմաճեան հրաւիրուեցաւ պաշտօնի: Հրաժարեցաւ նաեւ Պրն.
 Մկրտիչ Ղազիկեան, որուն տեղ հրաւիրուեցաւ Տիար Նազարէթ Հացագործեան:
 Ուրախ ենք ըսելու որ յաջորդ առաւելագոյն քուէ ստացող այս երկու անձերը
 ընդունեցին իրենց առաջարկուած պաշտօնը:

Հետեւեալը այսու կը ներկայացնենք ստորեւ տրուած անուանացանկը իբրեւ
 վերջնական արդիւնք Հոգաբարձական ընտրութեան, խնդրելով որ բարեհաճիք վաւերա-
 ցնել:

- Ա:- Վիշապազուն Մուշեղ
- Բ:- Մեծիկեան Գրիգոր
- Գ:- Զալգեան Ճօրճ
- Դ:- Գուշեան ,,
- Ե:- Պուրնազեան Արամ
- Զ:- Բարունակեան Երուանդ
- Է:- Պասմաճեան Տելեմաք
- Ը:- Հացագործեան Նազարէթ:


Դադարեալ չէր Տիար Պ. Բարունակեան որ կը մնայ իր պաշտօնին վրայ:


Տեղին է հաւանաբար բացատրութիւն մը տալ, թէ ինչու Յ հոգիներու ընտրուե-
 լուն պէտք ունեցանք այս տարի:

Նախորդ Հոգաբարձական մարմնոյ անդամներէն դադարեալ էին հետեւեալները.
 Տիարք. Տօքթ. Մարգարեան. Արամ Պուրնազեան, Գրիգոր Մեծիկեան, Կարապետ կարիպեան, Տ. Մարտի-
 եան Ռաֆի Ժամկոչեան: Իսկ 1951-ի սկիզբները հրաժարեր են Տիարք Ծահապ Մինաս-
 եան եւ Պերճ Երէցեան: 1952-ի Մարտի ընթացքին հրաժարեցաւ եւ Պրն. Ստեփան Ա -
 լաշեան, որով անհրաժեշտ եղաւ Յ անձերու ընտրութիւնը, որպէսզի Հոգաբարձութեան
 թիւը 9-ի ամբողջանայ:

Համաձայն մեր Թեմի Կանոնադրութեան Թիւ 29 Յօդուածին եթէ գտնուի անձ
 մը որ սոյն ընտրութեան մասին Հոգաբարձութեան դէմ գանձատ ունի, Հովիւի միջո -
 ցաւ պարտաւոր է գրաւոր կերպով իր գանձատը ուղղել Առաջնորդարան առ ի տնօրի-
 նութիւն: Այսու կը հաստատենք որ նման գրութիւն մը Հովիւին չէ յանձնուած:

Ի Դիմաց
 Ն. Ֆիլատելիոյ Ս. Երրորդութիւն Հայց. Եկղցյ.
 Հոգաբարձութեան

Հովիւ


Ա. Դպիր


H. Phila

Մարտ 11, 1953

Արժանաշնորհ
Տ. Արտէն ՔՀՆՅ. Աշճեան
Հովիւ Ս. Երրորդութիւն Եկեղեցւոյ եւ
Նախագահ Անդամական Ժողովոյ եւ
Հոգաբարձութիւն Ն. Տիլատելիոյ:

Սիրելի Տէր Արտէն,

Ստացած ենք Ձեր Մարտ 8 թուակիր նամակը, որով կը
յայտնէիք թէ բացառիկ Անդամական Ժողով մը գումարած էք եւ
այնտեղ Յանձնախումբ մը նշանակուած է Անդամական Ժողովին բո-
ղոքը եւ խնդրանքը ներկայացնելու մեզի, որպէսզի Հոգ. Տ. Թոր-
գոմ վրդ. Մանուկեանը շարունակէ մնալ Եկեղեցւոյ Հովիւ:

Նշանակուած Յանձնախումբի երեք անդամները, Պպ. Տ.
Պասմանեան, Ս. Մալումեան եւ Ն. Ղազիկեան առջի օր ներկայացան
Կեդրոնական Վարչութեան Ժողովին եւ ներկայացուցին Անդամական
Ժողովոյ խնդրանքը, աւելցնելով նաեւ որ պատրաստուած է նոյն
մտքով Հանրագրութիւն մըն ալ որ մեզ պիտի ներկայացուի ի մօտոյ:
Պէտք է այս մասին ըսենք թէ Անդամական Ժողովոյ միաձայնութեամբ
կայացուցած որոշումը Հանրագրութեան չափ կարելի է, եւ Հանրա-
գրութիւնը ինքնին մէկ կրկնութիւնն է Անդամական Ժողովի որոշման:

Ժողովիդ որոշման առարկայ եղող խնդրին ընդարձակօրէն
եւ Հանգամանօրէն անդրադառնալով, եւ իբ նախկին տուած որոշումը
դարձեալ նկատի առնելով Կեդրոնական Վարչութեան մէջ, դարձեալ
ուշադրութեան առինք այն կէտը թէ Հոգ. Տ. Թորգոմ վրդ. շատ ար-
դիւնաւոր գործ կատարած ըլլալով իր Հովուութեան ընթացքին, անոր
գործին շարունակումը Ձեր ծուխին մէջ ցանկալի պիտի ըլլար մեզ
որքան ծուխիդ անդամներուն: Մեծապէս գովելի կը գտնենք նաեւ
սիրոյ եւ յարգանքի այն զգացումը զոր Ժողովուրդը ցուցուցած է
իբ բարի եւ ժրջան Հովուին նկատմամբ:

Հեռաւարար մինչ մէկ կողմէն մեր պարտքն է Հսկել որ
ծուխիդ եկեղեցական գործերը ըստ ամենայնի բարւոք ընթանան, միւս
կողմէն մեր պարտքն է նաեւ Հոգ տանել որ ամբողջ թեմին եւ Ամերի-

Վերջին հարցը միակամուրջ է և ոչ ոք չի կարող արձակել անհատական անհատական իրավունքները: - Կ. Ե

ՎՅՈՒՆՈՒԹՅԱՆ ՅԱՆՎԱՐԿԱՆՈՒԹՅԱՆ

Միջոցառումներ ժողովրդի

- Կամ իր անհատական իրավունքները, որոնք

հարապատասխան են իր անհատական իրավունքների համար: Եթե իր անհատական իրավունքները չեն պահպանվում, ապա իր անհատական իրավունքները չեն կարող լինել:

Վերջին

հարցը հարապատասխան է իր անհատական իրավունքների համար: Եթե իր անհատական իրավունքները չեն պահպանվում, ապա իր անհատական իրավունքները չեն կարող լինել:

Եթե իր անհատական իրավունքները չեն պահպանվում, ապա իր անհատական իրավունքները չեն կարող լինել:


Վերջին

հարցը հարապատասխան է իր անհատական իրավունքների համար: Եթե իր անհատական իրավունքները չեն պահպանվում, ապա իր անհատական իրավունքները չեն կարող լինել:

ՀՈԳԻԱՐՁՈՒԹԻՒՆ
ՍԲ. ԵՐՐՈՐԴՈՒԹԻՒՆ
ՀԱՅՑ. ԱՌԱՔ. ԵԿԵՂԵՑԻՈՅ
Ն. ՖԻԼԱՏԵԼՖԻԱ, ՓԱ.

Եկեղեցւոյ Հեռաձայն
FRemont 7-9230

ՀՈԳ. Տ. ԹՈՐԳՈՄ ՎՐԴ. ՄԱՆՈՒԿԵԱՆ
Հոգեւոր Հովիւ



S. W. Corner
Susquehanna Avenue & Marshall Street

Holy Trinity
Armenian Apostolic Church
North Philadelphia 22, Pa.

Pastor
VERY REV. TORKOM MANOOGIAN

Pastor's Telephone
STevenson 4-6807

Մարտ 8, 1953

Կր. անդր. Գ. Մ. 1953

Գերաշնորհ
Տ. Տիրան Արք. Ներսոյեան
Բարեխնամ Առաջնորդ Ամերիկահայոց
եւ Նախագահ Պատ. Ազգային Կեդր. Վարչութեան
Նիւ Եորք, Ն. Ե.

Գերաշնորհ Սրբազան Առաջնորդ Հայր,

Նորթ Ֆիլատելֆիայի Ս. Երրորդութիւն Հայաստանեայց
Եկեղեցւոյ բացառիկ Անդամական Ժողովը, գումարուած Նախագահու-
թեամբ առժամեայ Հովիւ Տ. Արտէն Քհնյ. Աշճեանի, Մարտ 8-ին,
լսեց զեկեղեցումը եկեղեցւոյ Յանձնախումբին, որ նշանակուեցաւ
Փետրուար 1-ին գումարուած Անդամական Ժողովին մէջ, Կեդրոնա-
կան Վարչութեանը ներկայացնելու համայնքիս բողոքը եւ խնդրանքը,
եկեղեցւոյս Հովիւ Հոգ. Տ. Թորգոմ Վրդ. Մանուկեանը համայնքէս
չբաժնելու մասին:

Նկատի ունենալով որ Յանձնախումբս Նիւ Եորքէն, Կեդր.
Վարչութեանը ժողովէն վերադարձած է այն տպաւորութեամբ որ Ազգ. Կեդր.
Վարչութիւնը պիտի վերանկատէ եկեղեցւոյս Հովիւ Տ. Թորգոմ Վրդ.ի
պաշտօնին խնդիրը, կը փափաքինք այս հանրագրութեամբ Ձեր Սրբազ-
նութեան եւ Կեդր. Վարչութեանը ուշադրութեան յանձնել համայնքիս
բողոքը, Հոգ. Տ. Թորգոմ Վրդ.ը այս երկրորդ անգամն ըլլալով, ի
վնաս եկեղեցւոյս անդորրութեան, տեղափոխելու որոշմանդ դէմ:

Անդամական Ժողովս անգամ մը եւս կրկնելով իր խնդրանքը,
իրաւասութիւն տուած է միեւնոյն Յանձնախումբին, որ անձամբ
համայնքիս բողոքի հանրագրութիւնը ներկայացնէ Կեդր. Վարչութեանը յառաջ-
իկայ նիստին, որուն համար այսու կը խնդրենք Ձեր արտօնութիւնը:

Ի դիմաց Ս. Երրորդութիւն Եկեղեցւոյ
Անդամական Ժողովի
մնամբ յարգանքօք

Chrys. Khaj. Khaj.
Նախագահ

Ատենադպիր
Հովհ. Եղ. Կրկնաբար

Ատենադպիր
Արք. Մանուկեան

N. Phila

Յունվար 5, 1958

Արժանաշնորհ
Տ. Արտին ՔՀՆՅ. Աշճեան
Օգնական Հովիւ եւ փոխ-նախագահ
Հոգաբարձութեան Ս. Երրորդութիւն
Եկեղեցւոյն Հայոց
Նորթ Ֆրիւանկլինիա:

Սիրելի Տէր Արտին,

Եկեղեցւոյ Հոգաբարձութեան դիւանը կը Հաղորդէ մեզ՝
թէ Անգամական ժողովը անկարգ կը զգայ եւ Հետեւաբար որոշած է
միայն մէկ Հովիւի թոշակը Հոգայ յետ այսորիկ, այն ակնկալու-
թեամբ որ Հոգ. Տ. Թորգոմ վարդապետ պիտի կրնար մնալ եւ շարու-
նակի իրրու Եկեղեցւոյ Հովիւ:

Հոգաբարձութեանդ ուշադրութեան կը յանձնենք կարեւ-
րութեամբ թէ Հոգ. Տ. Թորգոմ վրդ. ը կը շարունակէ մնալ Առաջնոր-
դական փոխնորդ եւ Տեղեկատու Դիւանի պետը: Մեզ եւ Կեդրոնական
Վարչութեանս Համար կարելի չէ որ ազատ կարուցանենք Հոգ. Տ. Թոր-
գոմ վարդապետը այս յոյժ կարեւոր պաշտօններէն, որոնք Երեսփոխ-
նական ժողովոյ կողմէ ալ հաստատուած են յատուկ պիւտճէի յատկո-
մամբ:

Եւ որովհետեւ Անգամական ժողովը մէկ Հովիւի միայն
թոշակը կրնայ Հայթայթի եւ միւս կողմէ Հոգ. Տ. Թորգոմ վարդա-
պետ կը Հաղորդէ մեզ թէ իր թիմական պաշտօնները պիտի չկրնայ
վարել Ֆրիւանկլինիայէն, իրեն Հրահանգած ենք որ վերադառնայ Նիւ
Եորք, Թողլով Եկեղեցւոյ Հովուութեան պաշտօնը:


Միւս կողմէն Եկեղեցւոյ Հովուութեան պաշտօնին Համար
մեր կարգադրութիւնն է որ զուտ ժամանակի մը Համար ստանձնէք Ս.
Երրորդութիւն Եկեղեցւոյ Հովուութիւնը, մինչեւ որ Անգամական ժո-
ղովիդ Համար կարելի ըլլայ առաջին առթիւ Հովուական ընտրութիւն
կատարել կանոնաւոր եղանակաւ: Կը խորհինք որ այս բանը կարելի
կ'ըլլայ կատարել յառաջիկայ տարուան ընթացքին:

Այս բոլորը Հաղորդելով մեզ եւ Հոգաբարձութեանդ եւ
Հրահանգելով որ Հարկ եղան կարգադրութիւններն առ այդ,

Մեամբ Հայրական սիրոյ ողջունի
ազօթակէք

ԱՍԱՔԻՈՐԿ ՀԱՅՈՑ ԱՄԵՐԻԿԱՅԻ

ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹԻՒՆ
 ՍԲ. ԵՐՐՈՐԴՈՒԹԻՒՆ
 ՀԱՅՑ. ԱՌԱՔ. ԵԿԵՂԵՑԻՈՑ
 Ն. ՖԻԼԱՏԵԼՖԻԱ, ՓԱ.



Holy Trinity
 Armenian Apostolic Church
 of N. Philadelphia, Pa.

PASTOR
 VERY REV. TORKOM MANOOGIAN

Pastor's Telephone
 STEvenson 4-6807

Եկեղեցւոյ Հեռաձայն
 FRemont 7-9230

ՀՈԳ. Տ. ԹՈՐԳՈՄ ՎՐԴ. ՄԱՆՈՒԿԵԱՆ
 Հոգևոր Հովիւ

S. W. Corner
 Susquehanna Avenue & Marshall Street

Գեղ. Տ. Տիրան Սրբ. Արքեպիսկոպոս
 Բարեջան Առջնորդ Ամերիկայի Հայոց, եւ
 Նախագահ Կեդրոնական Վարչութեան
 Նիւ Եօրթ

Դեկտեմբեր 30, 1952

Գեղ. Սրբազան Հայր,

Նօրթ Ֆիլատելֆիոյ Ս. Երրորդութիւն Հայոց. Եկեղեցւոյ Անդամական
 Ժողովը գումարուեցաւ Դեկտեմբեր 28ին, Եկեղեցւոյ սրահին մէջ, Նախագա-
 հութեամբ Հոգ. Տ. Թորգոմ Վրդ. Մանուկեանի:

Անդամական Ժողովը նախատեսեց յաջորդ տարուան ծախքերը:
 Հոգաբարձութիւնս կը փափաքի ձեր ուշադրութեան յանձնել հետեւեալը.-
 Անդամական Ժողովը որոշեց միայն մէկ Հովիւի տարեկան ծախքը հոգալ: Եւ
 Ժողովին որոշ հասկացողութիւնն էր որ համայնքիս Հովիւն է Տ. Թորգոմ Վրդ.
 Մանուկեան:

Ուստի Հոգաբարձութիւնս կը խնդրէ Ձեր Սրբազնութենէն որ այս պարագան
 նկատի ունենալով հարկ եղած պատշաճ կարգադրութիւնը հաճիք կատարել:

Մատչելով ի համբոյր Ձեր Ս. Աջոյն
 Մնամք Խոնարհ Որդիք Ձեր

Ատն նշար

Ատն նսպետ

Նախագահ

N. Phila

Յուլի 2, 1953

Հոգեշնորհ
Տ. Թորգոմ վրդ. Մանուկեան
Նախագահ Հոգաբարձութեան
Ս. Երրորդութիւն Եկեղեցւոյ
ի Ֆիլատելիա

Սիրելի Հայր Թորգոմ,

Ստացած ենք Ձեր Դեկտեմբեր 29 թուակիր նամակը որով Տեղեկատու Դիւանի Ֆիլատելիա փոխադրութեան հետեւանքով Ձեր ունեցած դժուարութիւններուն պատճառաւ կը խնդրէիք ազատ կացուցուիլ նոյն պարտականութենէն, եւ Առաջնորդական փոխանորդի պաշտօնէն:

Ձեզի քաջ ծանօթ է թէ որքան անհրաժեշտ է մեր թեմին Համար որ դուք շարունակէք Տեղեկատու Դիւանի պաշտօնը, ընդ նմին եւ վարելով Առաջնորդական փոխանորդութիւնը: Հետեւաբար անկարելի է որ զՁեզ ազատ կարենանք կացուցանել այդ պաշտօնէն:


Սակայն ցանի որ անկարելի է Ձեզ Համար Ֆիլատելիայ մէջ շարունակել Տեղեկատու Դիւանի գործը, ինչ որ մեր ալ Համոզումն է, եւ Եկեղեցւոյդ անդամական ժողովն ալ որոշած ըլլալով որ մէկ հոգիւի միայն ծախքերը կրնայ հոգալ, զՁեզ ազատ կը կացուցանենք նորթ Ֆիլատելիայ հովուութեան պաշտօնէն եւ մեր հրահանգն է, Համաձայն Կեդրոնական Վարչութեան հետ, որ վերադառնաք նիւ Եօրք եւ այստեղ վարէք Ձեր թեմական պաշտօնները:

Գալով Եկեղեցւոյդ հովուութեան գործին՝ այդ մասին մեր կարգադրութիւնն է որ Արժ. Տ. Արտէն Քահանայն ժամանակի մը Համար չստանձնէ Եկեղեցւոյդ հովուութեան պաշտօնը, մինչեւ որ կարելի ըլլայ առաջին ասթիւ Եկեղեցւոյդ անդամական ժողովին Համար մնայուն հովիւ մը ընտրել կանոնաւոր եղանակաւ:

Մնամք սիրոյ ողջունիլ եւ օրհնութեամբ աղօթակից

ԱՌԱՋՆՈՐԴ ՀԱՅՈՑ ԱՄԵՐԻԿԱՅԻ

ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹԻՒՆ
ՍԲ. ԵՐՐՈՐԴՈՒԹԻՒՆ
ՀԱՅՑ. ԱՌԱՔ. ԵԿԵՂԵՑԻՈՅ
Ն. ՖԻԼԱՏԵԼՖԻԱ, ՓԱ.



Holy Trinity
Armenian Apostolic Church
of N. Philadelphia, Pa.

PASTOR
VERY REV. TORKOM MANOOGIAN

Pastor's Telephone
STevenson 4-6807

Եկեղեցւոյ Հեռաձայն
FRemont 7-9230

ՀՈԳ. Տ. ԹՈՐԿՈՄ ՎՐԴ. ՄԱՆՈՒԿԵԱՆ
Հոգեւոր Հովիւ

S. W. Corner
Susquehanna Avenue & Marshall Street

Գեր.
Տ. Տիգրան Սրբ. Արքեպիսկոպոս
Առաջնորդ Ամերիկայի Հայոց
Մատաւազ Կեդրոնական Վարչութեան
Նիւ Եօրթ

Դեկտեմբեր 29, 1952

Գեր. Սրբազան Հայր,
Կեդրոնական Վարչութեան որոշման համաձայն հրահանգած էիք որ
Առաջնորդարանի Տեղեկատու Դիւանի գրասենեակը Թիւտեւիա փոխադրելով նոյն
պտեն ստանձնեմ Ս. Երրորդութիւն Հայց. Եկեղեցւոյ հովուութիւնը, օգնական
Հովիւ ունենալով Տ. Արտէն Քահանան:


Սակայն կարելի չեղաւ առաջին պայմանը լիովին գործադրել, եւ ստիպուած
եմ շաբաթուան մէջ քանիցս Նիւ Եօրթ - Թիւտեւիա երթեւեկել, ինչ որ բաղ-
ձալի կացութիւն մը է:

Նկատի ունենալով որ ցարդ հրաժարական մը ներկայացուցած չըլլալով
կը նկատուիմ պատասխանատու Հովիւ Նօրթ Թիւտեւիոյ Ս. Երրորդութիւն Հայց.
Եկեղեցւոյ, կը խնդրեմ որ զիս ազատ կացուցանէք բացի հովուութենէն ինծի
տրուած պարտականութիւններէն, եւ պատշաճը տնօրինէք:

Մատչելով ի համբոյր Ձեր Ս. Աջոյն

Խոնարհաբար
Torkom Manoogian
ԹՈՐԿՈՄ ՎՐԴ. ՄԱՆՈՒԿԵԱՆ
Հոգեւոր Հովիւ

ՀՈԳԱՐԱՐՁՈՒԹԻՒՆ
ՍԲ. ԵՐՐՈՐԴՈՒԹԻՒՆ
ՀԱՅՑ. ԱՌԱՔ. ԵԿԵՂԵՑԻՈՑ
Ն. ՖԻԼԱԴԵԼՖԻԱ, ՓԱ.



Holy Trinity
Armenian Apostolic Church
North Philadelphia 22, Pa.

Pastor
VERY REV. TORKOM MANOOGIAN

Pastor's Telephone
STevenson 4-6807

S. W. Corner
Susquehanna Avenue & Marshall Street

22 Դեկտեմբեր 1954

Manoogian

ՍԿԵՂԵԳԼՈՅ ՀԵՌԱՃԱՅԻ
Ft. Mifflin 7-9230
ԱՐՏՆԵ ԲՆՈՑ ԱՇՃԵՍԵ
704 S. 22nd St. Philadelphia, Pa.

ԳԵՐԱՉՆՈՐՏ
Տ. ՄԱՄԲՐԷ ԱՐՔԵԿԻՍԿՈՎՈՍ ԳԱԼՖԱՅԵԱՆ
ԲԱՐԵԽՆԱՄ ԸՆՏՐԵԱԼ ԱՐԱՉՆՈՐԴ ԹԵՄԻՍ
ՆԻԼ ԵՐՐԲ, Ն. Ե.

ԳԵՐԱՉՆՈՐՏ ԱՐԱՉՆՈՐԴ ՀԱՅՐ,

ԵԿԵՂԵԳԼՈՅ ՏԱՐԵԿԱՆ ԵՒՍԱԿԱՆ ԺՈՂՈՎԸ ՎԻՄԻ ԳՈԼՄԱՐՈՒԼԻ
ՅՈՒՆՈՒՆԱՐ 16, 1955, ԿԻՐԱԿԻ ՕՐ: ՕՐԱԿԱՐԳԻ ԽՆԴԻՐՆԵՐՆ ԵՆ
ԴԱՂԱՐԵԱԼ ՏԻՆԳ ՏՈԳԱՔԱՐՃՈՒՆԵՐՈՒ ԸՆՏՐՈՒԹԻՒՆ, ԵԼ ՎԵՐՍՏՈՒԳԻՋ
ՅԱՆՃՆԱԺՈՂՈՎԻ ԸՆՏՐՈՒԹԻՒՆ:

ԵՐԵԿ ԻՐԻԿՈՒՆ ԵՒՍԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴՍ ԻՐ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻՆ ՄԵՉ
ՆԿԱՍԻ ԱՆՆԵԼՈՎ ԵԿԵՂԵԳԼՈՅ ՆԵՐԿԱՅ շԵՆՔԻ ԿԱԳՈՒԹԻՒՆՆԸ, ՎԱՓԱՔԵ-
ԳԱԼ շԵՆՔԸ ՎԱՃԱՐԵԼՈՒ ՀԱՐԳԸ ԵԼՍ ԴՆԵԼ ՏԱՐԵԿԱՆ ԵՒՍԱԿԱՆ ԺՈՂՈՎԻ
ՕՐԱԿԱՐԳԻՆ ՎՐԱՅ, ԵԼ ՂԱՅՆ ԾԱՆՈՒԳԱՆԵԼ ՀՐԱԼԻՐԱԳՐԻՆ ՄԵՉ:

ՀԱՄԱՃԱՅԻՆ ԹԵՄԱԿԱՆ ԿԱՆՈՆԱՂՐՈՒԹԵԱՆ ՅՕՂՈՒՄ 14- 2-Ի
ՍՐԱՄԱՂՐՈՒԹԵԱՆ, ԱՅՍՈՒ ԵՒՍԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԻՍ ԿՐ ԴԻՄԵՄ
ՉԵՐ ՄՐԲԱԳՆՈՒԹԵԱՆ, ՈՐՎԵՍՂԻ ՀԱՃԻՔ ԱՐՏՈՆԵԼ ՄԵՂ յԱՐԱՉԻԿԱՅ
ԵՒՍԱԿԱՆ ԺՈՂՈՎԻՆ ՄԵՉ ՆԿԱՍԻ ԱՆՆԵԼ ԵԿԵՂԵԳԼՈՅ ՆԵՐԿԱՅ շԵՆՔԸ
ՎԱՃԱՐԵԼՈՒ ՀԱՐԳԸ:

ՄՆԱՄ

ՈՐԴԵՒԱԿԱՆ ՅԱՐԳԱՆՕՔ

Արթուր Քրիստիան
ԱՐՏՆԵՆ ԲՏՆՅ. ԱՇՃԵԱՆ
ՀՈՎԻԼ



Դեկտեմբեր 27, 1954

Արժանաշարժ
Տ. Արտն ԲՀՆՅ. Աշճեան
Նախագահ Միական Խորհուրդի
Ս. Մարտիրոսիւն Եկեղեցւոյ
Ն. Տիլանելիա.

Սիրելի Տե Արտն,

Ստացած ենք Ձեր Դեկտեմբեր 22 թուակիւր նամակը որով կը
յայտնէք թէ յառաջիկայ Յունուար 10ին պիտի գումարէք Եկեղեցւոյ Տա-
րեկան Միական Ժողովը, կառարելու Միական Խորհուրդի գաղափարով Հին
անգամներուն ընտրութիւնը եւ ձեր քառուղիչ Յանձնարարման ընտրութիւնը,
ի նշան նաեւ նկատի առնելու Եկեղեցւոյ շէնքը վանանելու հարցը:

Այսու կարտեսենք Եկեղեցւոյ Տարեկան Միական Ժողովի գու-
մարումը մեզի ներկայացուած օրակարգով, եւ Եկեղեցւոյ շէնքը վան-
անելու հարցով զբաղելու պարտաւորին կը յանձնարարենք նկատի ունենալ
Թեմական կանոնադրութեան յօդուած 18-Բ.ը եւ առաջիտըն գործադրել
կանոնական բոլոր տրամադրութիւնները:

Ձայն հազարելով Ձեզի առ գիտութիւն եւ ի գործադրու-
թիւն.

Մեմբ հայրական օրհնութեամբ եւ սիրոյ ոգիւնիւ.

Ազօթարար

ՄԱՄԱՐԻ ԱՐԲՈՒՍԿՈՐՈՍ
Առաջնորդ Հայոց Ամերիկայի

31 Օգոստոս, 1954

Մեծայարգ
Տիար Երուանդ Բարունակեան
Ատենապետ Միակամ Խորհուրդի
Ս. Երրորդութիւն Եկեղեցւոյն
Նորթ Թիլանեյթիա

Սիրելի Պր. Բարունակեան,

Այսօր ստացանք պատճէնը այն նամակին զոր փաստարան
Ֆրեանքից Սարգիս զրկած է Պր. Արա Լիւլէճեանին:

Պր. Սարգիսի նամակէն կը տեղեկանանք թէ՛ Տէր եւ Տի-
կին Գառնիկ Գէորգեանները կուզեն պատուոյ զատ բանալ եկեղեցւոյ
Հոգեւոր Հովիւ՝ Տ. Կարէն ԲՀՆՅ. Աշճեանի գէմ, վերջինը ամբաստան-
ւելով Տիկին Գէորգեանի վրայ կատարած Տիգրիական յարձակումով եւ
անուարկումով Ս. Երրորդութիւն Եկեղեցւոյ մէջ՝ մեծ բազմութեան
մը ներկայութեան:

Նկատելով որ ծրագրուած զատը Հոգեւորականի մը գէմ
է, Պր. Սարգիս յանձնարարած է Տէր եւ Տիկին Գէորգեանին յետաձը-
գել զայն, եւ առիթ տալ Եկեղեցւոյ Միակամ Խորհուրդին որպէս զի
Տէր Արաէնը ներողութիւն խնդրէ Տէր եւ Տիկին Գէորգեաններէն:

Աւելորդ է ըսել որ մեր Եկեղեցւոյ արժանապատուութեան
հետ կապ ունեցող լուրջ հարց մըն է առիկա շնորհարար կը յանձնա-
րարենք Ձեզ որ կարելի փութով նկատի առնէք այս տխուր պարագան եւ
մտածէք այս կարգութեան խաղաղ լուծում մը տալու մասին եւ արգիւնջը
շուտով հաղորդէք մեզ:

Մաղթելով Ձեզ յաջողութիւն եւ կարողութիւն ի Տեառնէ,

Հայրական Սիրոյ Ողջունիւ եւ
Օրհնութեամբ

Աղօթարար

ՄԱՄԱՐԻ ԱՐՁԵՂԻՍԿՈՂՈՍ
Առաջնորդական Տեղապահ Հայոց
Ամերիկայի

FREDERICK D. SARKIS
ATTORNEY AND COUNSELLOR AT LAW
1920 ROBINSON AVENUE
HAVERTOWN, PENNSYLVANIA
TELEPHONE: HILLTOP 6-9633

August 27, 1954

Mr. Ara Lulejian
5 Sharpless Road
Melrose Park, Pennsylvania

Dear Mr. Lulejian:


Mr. and Mrs. H. K. Kevorkian, of 5617 Walnut Street, Philadelphia, have retained me to institute civil and criminal action against Rev. Arten Ashjian for his attack upon Mrs. Kevorkian on August 22, 1954, at 1:30 PM, in the Holy Trinity Armenian Apostolic Church, Susquehanna Avenue and Marshall Streets, Philadelphia.

It appears that at that time and place, Rev. Ashjian struck Mrs. Kevorkian in the mouth with his fist, twisted her arm, threatened to do other bodily harm, and insulted her with his language, all of which was witnessed by a large part of the church congregation.

Inasmuch as Rev. Ashjian is a priest, I have advised Mr. and Mrs. Kevorkian to withhold their contemplated legal action to give the trustees of the church an opportunity to take disciplinary action against Rev. Ashjian, and to suggest that he make a public apology for his conduct.

Will you kindly bring this matter to the attention of the church trustees as soon as possible, and advise me of the action contemplated.


Very truly yours,



Copies to:
Armenian Diocese
630 - 2nd Avenue
New York 16

ՀՈԳԱՐՁՈՒԹԻՒՆ

ՄԲ. ԵՐՐՈՐԴՈՒԹԻՒՆ
ՀԱՅՑ. ԱՌԱՔ. ԵԿԵՆՑԻՈՑ
Ն. ՖԻԼԱՏԵԼՖԻԱ, ՓԱ.



Holy Trinity
Armenian Apostolic Church
North Philadelphia 22, Pa.

Pastor
VERY REV. TORKOM MANOOGIAN

Pastor's Telephone
STevenson 4-6807

S. W. Corner
Susquehanna Avenue & Marshall Street

25 Օգոստոս 1954

Եկեղեցւոյ Հեռաձայն
Remont 7-9230

~~ԱՐՏԻՆ ԲԶՆՑ. ԱՇՃԵԱՆ~~

Հոգեւոր Հովիւ

Handwritten signature and notes in Armenian script.

Գերաշնորհ

Տ. Մամբրէ Արք. Գալֆայեան

Առաջնորդական Տեղապահ Ամերիկայի Թեմին, Կախաբահ Թեմական Խորհուրդի
Նիւ Եորք, Ն. Ե.

Գերապատիւ Սրբազան Հայր եւ Պատուարժան Խորհրդականներ,

Ներկայ կը գտնէք լման եւ հարազատ արտագրուած իւր նամակի մը, որու
բնագիրը ստուգած եմ թէ գրուած է եկեղեցւոյս անդամ Տիկ. Զարմինէ ԱԼԵՔՍԱՆ-
ԵԱՆԻ ձեռքով:

Յիշեալ տիկինը, որ տակաւին տարի մ'առաջ եկեղեցասէր Հայուհեաց Միու-
թեան ատենապետուհին էր, այս նամակը գրած միջոցին գիտէր թէ մեր ծուխին
ծանուցուած էր որ հովիւը Օգոստոս 1-էն 14 պիտի բացակայէր արձակուրդով:
Այս պարագան պատրուակելով, իմ անունիս ուղղած այս նամակը թղթատարով կը
ղրկէ ծխական Խորհուրդի ատենապետին, Օշըն Սիթի, ծովագերք, ուր արձակուրդով
կը գտնուէր վերջինս:

Ծխական Խորհուրդը նկատի կ'առնէ այս նամակը իմ բացակայութեան, Օգոս-
տոս 10-ի ժողովին մէջ, եւ զանց կ'ընէ հետեւեալ երկու կէտերը. —

1.— Յիշեցնել նամակագրին, որ Կախաբահի անունին ուղղուած նամակ
մը պէտք էր ղրկուէր անոր, եկեղեցւոյ կամ բնակարանի հասցեով: (Այս եթէ
պատահած լինէր, հովիւը Օգոստոս 7-ին ստացած պիտի ըլլար աս նամակը, քանի
որ նոյն օրը արձակուրդի կ'իսուս մէկ օրուան համար վերադարձած էր քաղաքս:)

2.— Դիտել տալ նամակագրին, թէ անպատշաճ է նման հրակերի մը
պարագային Արքեպիսկոպոս եւ Տեղապահ եղող հոգեւորական մը ստորագրուած վար-
դապետի մը, նախընտրութիւնը տալով վերջնոյս:

Օգոստոս 12-ի գիշերը արձակուրդէս բոլորովին վերադարձայ երկու օր
կանուխ, եւ յաջորդ առաւօտ առաջին առթիւ հեռաձայնեցի ծխական Խորհուրդի
պատասխանատու անդամին, թէ լուր տալու համար որ վերադարձած եմ, եւ թէ
հարցնելու թէ ո՞նչ նորութիւն կ'ա՞ր ծուխին մէջ: Այս հոգաբարձուն, ինչպէս
նաեւ խնդրէն տեղեակ միւսները, կարեւոր չհամարեցին ինձ լուր տալ թէ նիւ
Եորքէն հոգեւորական մը բերել տալու ջանք կ'ըլլայ, մինչեւ որ Օգոստոս 17-ի
ծխական Խորհուրդի հերթական ժողովին ատենագրութեան ընթացքման պահուն
առաջին անգամն ըլլալով տեղեակ եղայ թէ ինձ ուղղուած նամակ մը կար, եւ
նամակի բովանդակութեան մասին ծխական Խորհուրդը կարգ մը քայլեր առած էր:

Օգ. 22 - ի

Սրբազան Հայր, ՌԵՈՒՔ պատարագեցիք եւ քարոզեցիք այս եկեղեցւոյ մէջ,
եւ ես իբր հովիւ կարելի ջանքս թափեցի, տրուած կացութեան մէջ, որպէսզի
ձեր այցը ծանուցուի եւ պատարագը հանդիսաւոր մատուցուի: Կարծէք որպէս
վարձատրութիւն իմ այդ օրուան յոգնութեանց, յաւարտ պատարագի մեր սրահին
մէջ միջադէպ մը ծագեցաւ այս քաղաքի տիրահաշակ Հայ Հաբաթաթերթի խմբագրի

կնոջ մէկ անպատկառ եւ յախուռն ելոյթին պատճառով, որու ընթացքին այս կինը
յանդգնեցաւ երեսիս պռաւ թէ 'Սրբազանը բերել տուողը ինքն էր:':

Արդ, այս եղելութիւնները յանձնելով Ձեր եւ Պատուարժան թեմական խորհուր-
դիդ ուշադրութեան, կը խնդրեմ որ հաճիք գրով ազգաբարել եկեղեցւոյս Եխական
խորհուրդին, որ, թեմական նախնադրութեան 48-րդ յօդուածի հիման վրայ, յետ այսու
առիթ չտան այս տեսակ անկանոնութեանց, եւ գիտակցին որ ոեւէ ծիսակատարութեան
համար դուրսէն գալիք հոգեւորապահին հրաւերը պէտք է ուղղուի տեղւոյն հովիւին
միջոցաւ, անոր գիտութեամբը:

Յուսաւով որ փութով նկատի կ'առնէք
խնդրանքս

մնամ, որդիական յարգանք

մատչելով ի համբոյր Ս. ԱՋՈՅԷ

Արքեպիսկոպոս Աղճեան
Արտէն ԲՏՆՅ. Աշճեան
Հովիւ

ՊԱՏՃԻՆ

Օգոս. 4 1954
ՖԵԼՎՈՒԼՖԻՎՈՅ

Արժանապատիւ
Տէր Արտէն քահ. Աշճիեան
Նախագահ

Պատ. Ծխական խորհուրդ
Սուրբ Երրորդութիւն Եկեղեցւոյ
Աստ.


Յարգելի Տեառք,

Ամսուս 22 կիրակի կը Լրանայ հանգուցեալ Տիկնոջս մահուան քարասունքը: Իմ եւ
Ձաւակներուս փափաքը է որ վերոհիշալ օրուան քարոզիչը ԸԼԼԱՅ մեր նախկին հովիւ
Տէր Թորգոմ վարդ. Մանուկեանը որ հանգուցեալին համակրութիւնը կը վայելեր:
Կը յուսամ թէ մեր այս պահանջը իրականացնելու համար պատուարժան ծխական խորհրդը
չանք չի պիտի խնայէ: այս առթիւ ընդունեցէք կանխահայտ շնորհակալութիւներս
յարգանքով ձերը
Մանասէ Բիւլհանճիեան

Թ.Գ. Եթէ բանաւոր պատճառով Թորգ.վարդ. մանուկեանը չի կրնայ ներկայ ԸԼԼԱԼ պիտի
փափաքէինք որ հրաւիրուի Արաջնորդական փոխանոր. Արգ.Գալֆայանը
որ հանգուցեալին հայրենակից է
Նոյն

(Նամակիս պատասխանին)
Կ' սպասեմ

ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹԻՒՆ
ՍԲ. ԵՐՐՈՐԴՈՒԹԻՒՆ
ՀԱՅՑ. ԱՌԱՔ. ԵԿԵՂԵՑԻՈՅ
Ն. ՖԻԼԱՏԵԼՖԻԱ, ՓԱ.



Holy Trinity
Armenian Apostolic Church
of N. Philadelphia, Pa.

PASTOR
VERY REV. TORKOM MANOOGIAN

Pastor's Telephone
STevenson 4-6807

Եկեղեցւոյ Հեռաձայն
FRemont 7-9230

ՀՈԳ. Տ. ԹՈՐԳՈՄ ՎՐԴ. ՄԱՆՈՒԿԵԱՆ
Հողհար Հովիւ

S. W. Corner
Susquehanna Avenue & Marshall Street

Մարտ 15, 1955

Handwritten note:
Բնակարանի
մեջ

ԳԵՐ.

Տ. Մամբրէ Ս. Առքեպիսկոպոս
Առաջնորդ Հայոց Ամերիկայի
Նիւ Եօրք

Սրբազան Հայր:

Եկեղեցւոյ խորհուրդիս Տ. Թորգոմ Հայր Մանուկեանի 'ի խնդիր
ձեր գրած նամակը նկատի առնուեցաւ մեր ժողովի ընթացքին:

Կը յայտնէ ի՞նչ մեզ որ յիշեալը ամէն ամիս անգամ մը, կերակ-
նորեայ Ս. Պատարագ մատուցանէ լօնկ Այլնտի համայնքին:

Եկեղեցւոյ խորհուրդս նկատելով որ Տ. Թորգոմ Հայր Մանուկեանը
4 օրեան համար միայն մեզ տրամադրեր էք, եւ ներկայ վիճակը ինք-
նին անբաւարար է թեմական հոգեւոր պահանջներուն, կ'ստիպուինք
ըսել թէ այս տեսակ խնդրանք մը աւելի եւս պիտի վնասէ այսպեսի
մեծ համայնքի մը կենսունակութեան, ուստի կը խնդրենք Ձերդ գե-
րապատուութենէն բարեհաճ գտնելիլ այլ ձեւ կարգադրութեան մը:

Մատչելով ՚ի Համբոյր Զերդ Ս. ԱՁոյն

Հոգաբարձութիւն Ս. Ե. Հ. Ա. Եկեղեցւոյ

Ատենապետ

Ատենադպիր,

Երուանդ Բարունակեան

Գ. Մեծիկեան

Ապրիլ 18, 1955

Պատուարժան
Միական Խորհուրդ
Ս. Արրորդութիւն եկեղեցւոյ
Ն. Տիլանելիա.

Ազնի սիրելի մեր.

Օտարած ենք տարւոյս Մարտ 15 Թուակիր Ձեր նամակը, որով
կը յայտնէիք թէ եկեղեցւոյդ ժամանակաւոր Հովիւ Հոգ. Յ. Թորոս Արք.
Մանուկեան Հարկ է որ ամէն Կիրակի զտնուի Ձեր Համայնքին մէջ:

Այսու Ձեր սիրելիութեանց կը հաղորդենք թէ Թեմական Խոր-
հուրդը եր վերջին նիստին մէջ վերահաստատեց իր տուած նախորդ որո-
շումը, ըստ որում Հայր Թորոս ամսուան մէջ մէկ Կիրակի պէտք է որ
յանձնաձէ հոգեւոր մտակարարութիւնը Հօնկ Այլընտի նորակազմ ծու-
խին. իսկ այն Կիրակի որը որ Հայր Սուրբը պիտի բացակայի Ձեր Հա-
մայնքէն, մենք կարգ ենք նշանակել այցելու Հովիւ մը, որ զինքն
փոխարինէ:

Փախցնելի է որ Հանութեամբ մեզ տեղեակ պահէք որպէսզի կա-
րենանք Հարկը տնօրինել:

Մազթելով Ձեզի ույժ եւ կարգութիւն.

Մամբ Հայրական օրհնութեամբ եւ սիրոյ ողջունիւ.

Աղօթացար

ՄԱՄԱՐԻ ԱՐԵՍՊԵՍԿՈՐՍ
Առաջնորդ Հայրոց Ամերիկայի

Ապրիլ 18, 1955

Պատուարժան
Միսկան Խորհուրդ
Ս. Երրորդութիւն Եկեղեցւոյ
Ն. ԾիլատնիՅիւ։

Ազնի սիրելիք մեր։

Ստացած ենք տարւոյս Մարտ 15 թուակիր Ձեր նամակը, որով
կը յայտնէիք թէ Եկեղեցւոյ ժամանակաւոր հովիւ Հոգ. Տ. Թորգոմ Վրդ.
Մանուկեան հարկ է որ ամէն հիւրակի գտնուի Ձեր համայնքին մէջ։

Այսու Ձեր սիրելիութեանց կը հաղորդենք թէ Թեմական Խոր-
հուրդը իր վերջին նիստին մէջ վերահաստատեց իր տուած նախորդ որո-
շումը, ըստ որում Հայր Թորգոմ ամսուան մէջ մէկ հիւրակի պէտք է որ
յանձնաձէ հոգեւոր մատակարարութիւնը Լօնկ Ալլընտի նորակազմ ծու-
կին։ Իսկ այն հիւրակի օրը որ Հայր Սուրբը պիտի բացակայի Ձեր հա-
մայնքէն, մենք կարող ենք նշանակել այցելու հովիւ մը, որ զինքը
փոխարինէ։

Փափանք թէ որ հաճութեամբ մեզ տեղեակ պահէք որպէսզի կա-
րենանք հարկը տնօրինել։


Մազթելով Ձեզի ույժ եւ կարողութիւն։

Մնամք հայրական սրհնութեամբ եւ սիրոյ ողջունիւ։

Աղօթաբար

ՄԱՄԱՐԷ ԱՐԲԵՐԵՍԿՈՊՈՍ
Առաջնորդ Հայոց Ամերիկայի

ՀՈԳԱՐՁՈՒԹԻՒՆ
ՍԲ. ԵՐՐՈՐԴՈՒԹԻՒՆ
ՀԱՅՑ. ԱՌԱՔ. ԵԿԵՂԵՑԻՈՑ
Ն. ՖԻԼԱՏԵԼՖԻԱ, ՓԱ.



Holy Trinity
Armenian Apostolic Church
North Philadelphia 22, Pa.

Եկեղեցւոյ Հեռաձայն
FRemont 7-9230

Pastor
ՄԱՅՔԱՅԵՐԻ ԿԵՐՈՅՈՒՄԻՆՈՒԿԻԱՆ
Rev. Beghos Manoukian
Pastor's Telephone
STevenson 4-6807

Տ. ՊՈՂՈՍ ՔՏՆՅՍ. ՄՅՆՈՒԿԵԱՆ

S. W. Corner

Susquehanna Avenue & Marshall Street

ՅՈՒՆԻՍ 12, 1956

Handwritten mark

ԳԵՐԱՉՆՈՐԸ Տ. ՄԱՐԲԵ Ս. ԱՐՔԵԿ. ԴԱԼՖԱԵԱՆ

ԲԱՐԵԽՆԱՄ ԱՂԱՋՆՈՐԸ ՀԱՅՈՑ ԱՄԵՐԻԿԱՅԻ.

ՍԵՐԵԼԻ ՍՐԲԱԳԱՆ ՀԱՅՐ,

ՆԵՐՓՈՒԿԵԱԼ Ե ԲԱԳԱՐԻԿ ԱՆՂԱՄԱԿԱՆ ԺՈՂՈՎԻ ՄԸ ԿՈՂԸ, ՈՐՈՒՆ ՕՐԱ-
ԿԱՐԳԸ Կ, ԵՆԹԱՐԿԵՆՔ ԹԵՄԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԻ ԵԼ ՁԵՐ Ս.ԹԵԱՆ ՎԱԼԵՐԱԳՈՒ -
ՄԻՆ:

ՆՈՐ ԼՍԵԳԻՆՔ ԱՅՍ ՀՈՂԻ ՄԱՍԻՆ ԵԼ ՆԿԱՏԵԼՈՎ ՈՐ շԱՍ ԺԱՄԱՆԱԿ
ՀԿԱՅ ՄԻՆՉԵԼ ԱՃՈՒՐԴԻ ԹՈՒԿԱՆՈՐ, ՀԵՏԵԼԵԱԼ ԿԵՏԵՐԸ ԿՈՒՂԵՆՔ յԱՆՃՆԵԼ
ՁԵՐ ՆԿԱՏԱՐՈՒԹԵԱՆ. -

1.- Ս. ԵՐՐՈՐԴՈՒԹԻՒՆ ԵԿԵՂԵՑՈՅ ԱՆՂԱՄԱՆԵՐԸ, ՈՐՈՒՆԳ ԹԻԼԸ 300Ը
ԿԱՆԳՆԻ, ՀԵՆ ԱՎՐԻՐ ՀԱՄԱԽՈՒՄԸ ԵԼ ԵԿԵՂԵՑԻՒՆ ՄՕՏԵՐԸ. ԸՆԴՀԱԿԱՄԱԿԸ
ԳՐՈՒԱԾ ԵՆ ԵԿԵՂԵՑԻՒՆ շԱՍ ՀԵՌՈՒ ՎԱՅՐԵՐՈՒ ՄԵՉ: ԱՅՍ ԱՄՏՃԱՄԱԿԱՆ
ՀԱԼԱՆԱԿԱՆ Ե ՈՐ ԿԱՐԵԼԻ ՀԱԽԻԹԻ ԸԼԼԱՅ ԼՐԱԳՆԵԼ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹԵԱՆ ՄԵ -
ՃԱՄԱՆՈՒԹԻՒՆ ԳՈՅԱԳՆԵԼՈՒ ԱՅՄԱՆՈՐ (ՅՕԴ. 18, Բ.) ՈՐՈՒՆ ՀԱՄԱՐ
ԿԸ ՓԱՓԱՔԻՆՔ ՈՐ ՎԵՐՈՅԻՉԵԱԼ յՕԴՈՒԱԾԻ ՍՐԱՄԱԴՐՈՒԹԻՒՆՆԸ ՀԱՐԱՏԱԴՐՈՒԹԻՒՆ
ԳՈՒՄԱՐՈՒԵԼԻՔ ԱՅՍ ԺՈՂՈՎԸ ՕՐԻՆԱԼՈՐ ՍԵՎՈՒԻ:

2.- ԱՅՍ ՀՈՂԸ ԿԸ ԱՄՏԿԱՆԻ ՖԻԼԱՏԵԼՖԻՈՅ ՔԱՂԱՔԻՆ: ԿԵՆԹԱԴՐՈՒԹԻ
ԹԵ 50ԵՆ 60 ՀԱՂԱՐԻ (ՍՈՒԼԱՐ) ՉՈՒՐՉ ԱԽԻԹԻ ԾԱԽՈՒԹԻ, ԳԻՆ ՄԸ ՈՐ շԱՍ
ԱՓԱՆ ԱԿՏՔ Ե ՍԵՎԵԼ. ԿԸ ԿԱՐԾԵՆՔ ԹԵ ՄԵՐ ՖԻՆԱԿԱՆ ԺՈՂՈՎԸ ԱԽԻԹԻ ՀԱԼԱ-
ՆԻ ՈՐ ԱՅՍ ԳՈՒՄԱՐՈՎ ՄԱՍՆԱԿԵՐՆՔ ԱՃՈՒՐԴԻՆ:

ՈՒՐԵՄՆ, ՆԿԱՏԻ ՈՒՆԵՆԱԼՈՎ ՎԱՃԱՐՈՒՄԻ ԱՃՈՒՐԴԻ ՀԱՆԳԱՄԱՆՔԸ ԵԼ
ՆԿԱՏԻ ՈՒՆԵՆԱԼՈՎ ՈՐ ԺԱՄԱՆԱԿ ՀԱԽԻԹԻ ԸԼԼԱՅ ԵՒՍԱԿԱՆ ԺՈՂՈՎԵՆ ԵՍՔ
ՄԻՆՉԵԼ ԱՃՈՒՐԴԻ ՕՐԸ ՁԵՂ ՀԵՍ ԹՂԹԱԿԵՑԵԼՈՒ, ԿԸ ՓԱՓԱՔԻՆՔ ՈՐԿԱՆԽԱԼ
ՍՏԱՆԱՆՔ ՁԵՐ ՀԱԼԱՆՈՒԹԻՒՆՆԸ ԱՅՍ ՀՈՂԻ ԳՆՈՄԱՆ ՀԱՄԱՐ:

ՍԿԱՍԵԼՈՎ ՁԵՐԸ Ս.ԹԵԱՆ ՉՈՒՍԱՓՈՅԹ ԱՄՏԱՍԽԱՆԻՆ, ՄՆԱՄՔ

ՈՐԴԻՔԱՐ ԵԼ
ՍՐԱՉԵՂՈՎ Ի ՀԱՄԱՐՈՐ ՁԵՐՍ. ԱՋՈՅՆ
ՊՈՂՈՍ ՔՏՆՅՍ. ՄՅՆՈՒԿԵԱՆ

ՀՈՎԻՏ
ԱՄՔԻՍ ԲԱՄԱՆ ԳՐԱՆԻ
ՍԱՐԴԻՍ ՄՅՆՈՒԿԵԱՆ, ԱՄՏԱՍԿԵՍ

Handwritten signatures and notes

Բ Ա Յ Ա Ռ Ի Կ ԱՆՊԱՊԱԿԱՆ Ժ Ո Ղ Ո Վ
- - - - -

Կը հրահրուիք ներկայ գտնուիլ Բացարկի Եկեղեցի
Ժողովի մը (Անդամական) որը տեղի պիտի ունենայ Յունիս
17, 1956, Կիրակի, Եկեղեցւոյ աւարտութեան անմիջապէս
յետոյ, Եկեղեցւոյ Սրահին մէջ:

Օ Ր Ա Կ Ա Ր Գ
- - - - -

1.- Նկատուածիւն գնման վեցուկէս իջքը հողի մը
որ կը գտնուի Աքսֆորտ Իվընիւի արեւմտեան կողմը, Մէկի Փողոցին
ճիշտ քովը: Այս հողը աճուրդով պիտի ծախուի Յունիս 26ին, որուն
համար փախաքելի է որ ԱՆՊԱՊԱԿԱՆ Զանա տեսնել այս վայրը Անդա-
մական Ժողովի օրէն առաջ:

Հովիւ եւ
Եկեղեցի խորհուրդը- Հոգաբարձութիւն
Ս. Երրորդութիւն Եկեղեցւոյ
Նօթիս ֆիլատէլֆիայի

M E M B E R S H I P M E E T I N G

YOU ARE INVITED TO BE PRESENT AT:

A general Membership Meeting on Sunday,
June 17, 1956, immediately after Church
Services. The Meeting will take place
in the Church Hall.

THE AGENDA WILL BE AS FOLLOWS:

1. Consider the purchase of 6½ acres of
ground, which is to be auctioned on
June 26 - this site is located on the
West side of Oxford Avenue, just above
Magee Street.

It is suggested that all members avail themselves
of the opportunity to visit this site prior to the
General Meeting.

PASTOR AND
PARISH COUNCIL OF THE
NORTH PHILADELPHIA HOLY TRINITY
ARMENIAN CHURCH

Թի. 855
Յունիս 14, 1956

Արժանաշնորհ
Տ. Պողոս ԲԷՆՅ. Մանուկեան
Կախազակ Միսկան Խորհուրդի
Ս. Սրբոբոյութիւն Եկեղեցւոյ
Ն. Երկաթեղծիւն.

Սիրելի Տէր Գոզոս.

Ի պատասխան Յունիս 12 թուակիր Ձեր նամակին, այ-
տու, Առաջնորդ Սրբազան Հոր Հրահանգովք, կը յայտնենք թէ արտոն-
ուած էք ամսոյս 17ին գումարել բազառիկ Միսկան Ժողով - Համայն-
քիդ Համար նոր եկեղեցիի մը շինութեան հոգի մը գնման օրակար-
գով:


Յանձնարարելի է որ ըստ կարելւոյն Հանաք Հետեւի
Թեմական Կանոնադրութեան նրամադրութեանց:

Յաշտութեան մաղթանքներ Ձեր եկեղեցաշէն առաջադ-
րութեանց:

Մամ Խորին յարգանքով

Առաքէն Մանուկեան
Գիտնադպիր

ՄԲ. ԵՐՐՈՐԴՈՒԹԻՒՆ
ՀԱՅՑ. ԱՌԱՔ. ԵԿԵՂԵՑԻ
Ն. ՖԻԼԱՏՆԼՖԻԱ, ՓԱ.



Holy Trinity
Armenian Apostolic Church

North Philadelphia 22, Pa.

Եկեղեցւոյ Հեռաձայն
Սրահ՝ FRemont 7-9230
Հովիտի Գրասենեակ՝ STEvenson 4-6807

CHURCH PHONES
Hall: FRemont 7-9230
Pastor's office: STEvenson 4-6807

S. W. Corner
Susquehanna Avenue & Marshall Street

Յուլիս 12, 1957

Handwritten signature/initials

Գերաշնորհ Տ.Մամբրէ Ս. Արքեպ. Գալֆաեան
Բարեխնամ Առաջնորդ Հայոց Ամերիկայի
630 2nd Ave.
New York, N.Y.

Սերելի Սրբազան Հայր,

Այսու կուգանք Ձերդ Ս.Թեան ներկայացնել մեր վերջի Անդամական Ժողովին որոշումը, գնելու համար 11 Էյքզընոց հող մը, որուն համար գրած էինք եւ ստացած Ձերդ Ս.Թեան հաւանութիւնը, գումարելու այս բացառիկ Անդամական Ժողովը:

Ժողովը որոշեց գնել այդ 11 Էյքզընոց հողը, ՊԱՅՄԱՆՈՎ ՈՐ տեղւոյս Բըլճեան Ճարտարապետական Ընկ.ը յարմար գտնէ այս հողը մեր նպատակին եւ յանձնարարէ գնել զայն, եւ ՊԱՅՄԱՆՈՎ ՈՐ տեղւոյն Զօնինկի Մարմինը արտօնէ Մշակութային Կեդրոնի եւ Եկեղեցւոյ շէնքերուն շինութիւնը այդ հողին վրայ իր յարակից մարզական յարմարութիւններով:

Ուրախ ենք յայտնելու որ Բըլճեան Ընկ.ը իր հաւանութիւնը տուաւ եւ յանձնարարեց գնել այս հողը իբր շատ յարմար մեր նպատակին: Որով Բըլճեան Ընկ.ը սկսած է ուսումնասիրել նախապատրաստական ուղուադիծ մը, որը պիտի ներկայացուի Զօնինկի Մարմինին: Շատ վստահ ենք որ Զօնինկի Մարմինն ալ պիտի տայ իր հաւանութիւնը— անպաշտօն կերպով այդպէս արտայայտուած են արդէն:

Այս առթիւ կուզենք մեր խորին շնորհակալութիւնները յայտնել Ձերդ Ս.Թեան որ տարի մը առաջ նկատի առնելով մեր անհովիւ վիճակը, մեզ ղրկեցիք, առժամեայ հանգամանքով Տ.Պօղոս Գհնյ. Մանուկեանց որ թիջմընտի Ս. Յակոբ Եկեղեցւոյ Հովիւն է:

Ինչպէս յայտնի է Ձերդ Ս.Թեան, Համայնքս ունի վերել յիշուած ցրագիրը շինելու Եկեղեցի եւ Մշակութային Սրահ, որը մեծ պատասխանատուութիւն մըն է եւ որը առանձին չի կրնար ի գլուխ հանել, եւ այս գործին յաջողութեան համար անհրաժեշտ է որ Համայնքս ունենայ Հովիւ մը որ իր բոլոր ժամանակը կրնայ տրամադրել մեզի:

Երկական Խորհուրդս Լըջօրէն նկատի առաւ այս հարցը եւ միաձայնութեամբ որոշեց խնդրել խոնարհաբար Ձերդ Ս.Թեանէն որ բարեհաճիք մեզ տրամադրել Տ. Շահէ Գհնյ Ալթունեանը, որը վստահ ենք թէ իր յայտնի կարողութիւններով եւ գործակցութեամբ մեր համայնքին ի գլուխ պիտի հանէ այս ծրագիրը կրկին կը թախանձենք որ մեր այս խնդրանքին յոյժ կարելորութիւն տաք եւ ընդգոյթ կարգադրէք պէտք եղածը, որուն համար կը յայտնենք մեր որդիական կանխայայտ շնորհակալութիւնները:

ԱՏԵՆԱՊԵՏ *Handwritten signature* ԵՄԼԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ ԵՐՐԹ ՖԻԼԱՏԵԼՖԻՈՅ
3016 E. 4th Street

Թիւ 2033
Յուլիս 20, 1957

Պատուարժան
Սիական Խորհուրդ
Ս. Սրբորդութիւն Եկեղեցոյ
ՆորՅէ Ֆիլատելիա.

Ազնի սիրելի մեր.

Ստացած ենք Յուլիս 12 թուակիր Ձեր նամակը, որուն պարուսակութեան վերահասու եղանք ուրախութեամբ հովելի կը գրուենք համայնքի ժողովուրդին եւ Սիական Խորհուրդիդ տարած աշխատանքը յօգուտ նոր եկեղեցիի մը եւ սրահի մը շինութեանս կը հրահանգենք որ հողի գնման պարագային տիրոջ պէտք է անուի Առաջնորդարանիս անուան, ինչպէլով ապագայի դժուարութիւնները:

Ձեռամբ կրկնակի եւ այժմ գրաւոր ներկայացուցած Ձեր էջերանքին ընդառաջելով Ձեր պատուական ծուխին հոգեւոր հովիւ նըշանակած ենք Արժանաշնորհ Տ. Եակէ ԲՀՆՅ. Ալթունեանը, առժամեայ հանգամանքով Տ. Եակէ Թեմիս արժանաւոր եկեղեցականներէն մին է եւ անտարակոյս որ իմացութեամբն ու փորձառութեամբը պիտի կարողանայ արդիւնաւոր ընծայել Ձեր եկեղեցոյ շինութեան մեծ ձեռնարկը:

Տ. Եակէ ծուխիդ մէջ իր պաշտօնին կը սկսի յառաջիկայ Սգոստոս 1ին Ուրբեմն այդ թուականաւ վերջ կը գտնէ Ձեր այժմու հոգեւոր հովիւ Արժանաշնորհ Տ. Պողոս ԲՀՆՅ. Սանուկեանի պաշտօնը, զոր կը վարէր այնքան նուիրուեով վերջի մէկ տարուան ընթացքին:

Պատշաճ կը լինի որ ի գնահատութիւն Տ. Պողոսի մատուցած ծառայութեան, պատուոյ սեղանով մը պատուէք զինքը:


Հաղորդելով զայս առ ի գիտութիւն եւ մաղթելով եկեղեցաշէն Ձեր զօրջոյ յաջողութիւն եւ համայնքի ժողովուրդին եւ պատուարժան Սիական Խորհուրդիդ անդամներուն քաջաողջութիւն եւ քաջութիւն ու համախոհ զօրծունելութիւն:

Մնամք հայրական սիրոյ ողջունի
Ազօթարար

ՄԱՄԱՐԻ ԱՐՄԵՆԻԱՆՈՒԹՅՈՒՆ
Առաջնորդ Ամենիկայի Հայոց

ՄԲ. ԵՐՐՈՐԴՈՒԹԻՒՆ
ՀԱՅՑ. ԱՌԱՔ. ԵԿԵՂԵՑԻ
Ն. ՖԻԼԱՏՆԻՖԻԱ, ՓԱ.

Եկեղեցւոյ Հեռաձայն
Մրահ՝ FRemont 7-9230
Հովիտի Գրասենեակ՝ STEvenson 4-6807



Holy Trinity
Armenian Apostolic Church
North Philadelphia 22, Pa.

CHURCH PHONES
Hall: FRemont 7-9230
Pastor's office: STEvenson 4-6807

POPLAR 3-6807

S. W. Corner
Susquehanna Avenue & Marshall Street

ՍԵՊՏ. 28, 1960
ՖԻԼատէԼֆիա

Գերաշնորհ
Տ. Սեոն Ս. Արք. Մանուկեան
Առաջնորդ Հայոց Ամերիկայի
Նիւ Եորք

Սրբազան Հայր,

Նորթ ֆիլատէԼֆիոյ Ս. Երրորդութիւն Հայոց Եկեղեցւոյ
նախապատրաստական Տարեկան Ընդհանուր անդամական ժողովը տեղի պիտի ունենայ
Հոկտ. 9, 1960, Կ. Վ. ժամը 2ին, Եկեղեցւոյս վարդանանց սրահին մէջ:

Ժողովի օրակարգի նիւթերն են.

1. - Ընտրողական Թանձնախուսմբի-Ընտրութիւն:
2. - Պատգամաւորական ժողովի տարուելիք հարցեր:
3. - Շինութեան Թանձնախուսմբի-Տեղեկագիր:
4. - Նոր Հարցեր:

Առ ի գիտութիւն զայս տեղեկացնելով Ձերդ Սրբազանութեան կը խնդրենք
Ձեր Հայրական Օրհնութիւնները մեր գործերու յաջողութեան համար ի փառս Հայոց
Ս. Եկեղեցւոյ:

Մաղթելով Ձեզ քաջաւորջ երկեր կեանք,

Մատչելոջ ի համբոյժ Ձեր Ս. Աշոյն

Մնամ՝
Որդեական սիրով եւ Յարգանք
Աւարդիս Բեկյ Գալոյ Գալոյ
Սարգիս ԲՏՆՅ. Գալոյ Գալոյ

Թիւ 1590
Սեպտ. 29, 1960

Արժանաշնորհ
Տ. Սարգիս ԶՆՅ. Գաշըզնեան
Հոգեւոր Հովիւ Ս. Երրորդութիւն եկեղեցւոյ
եւ նախագահ Միսկան Խորհուրդի
Նորթ Գիլատեիքիա.

Սիրելի Տէր Հայր.

Ստացած ենք Ձեր Սեպտ. 28 թուակիր նամակը, որով մեզի
կը ներկայացնէք 1960 Հոկտ. 9ին գումարուելիք Ձեր տարեկան Թիս-
կան Ժողովի օրակարգը եւ կը խնդրէք մեր օրհնութիւնը այդ առթիւ:

Հանեցէք մեր օրհնութիւնները եւ յաշտութեան մազթանք-
ները հաղորդել պատուարժան Միսկան Խորհուրդիդ, Միսկան Ժողովին
եւ հաւատացեալ Ժողովուրդին:

Թելադրելի է որ Միսկան Ժողովէն անմիջապէս յետոյ Առաջ-
նորդարան դրկէք Ձեր եւ Միսկան Խորհուրդի տարեկան տեղեկագիրը,
ինչպէս նաեւ մասնակի ընտրութեան արդիւնքը առ շի վաւերացումն:

Հայրական սիրոյ ողջունիւ
Աղօթարար

ՍԻՈՆ ԱՐԵՅԳԻՍԿՈՊՈՍ
Առաջնորդ Հայոց Ամերիկայի

ՄԲ. ԵՐՐՈՐԴՈՒԹԻՒՆ
 ՀԱՅՑ. ԱՌԱՔ. ԵԿԵՆԵՑԻ
 Ն. ՖԻԼԱՏՆԻՑԻԱ, ՓԱ.

Եկեղեցւոյ Հեռաձայն
 Մրահ՝ POplar 9-9230
 Հովիտի Կրօնականի՝ POplar 3-6807

Տ. Սարգիս ԲՏՆՅ. Գաշըզճեան
 Հովիտ



Holy Trinity
 Armenian Apostolic Church

North Philadelphia 22, Pa.

CHURCH PHONES
 Hall: POplar 9-9230
 Pastor's office: POplar 3-6807

Rev. Sarkis Kashikjian
 PASTOR

S. W. Corner
 Susquehanna Avenue & Marshall Street

Մարտ 14, 1961

Գերաշնորհ
 Տ. Սիոն Ս. Արք. Մանուկեան
 Առաջնորդ Հայոց Ամերիկայի
 Նեւ Երբ

Սրբազան Հայր,

Ձերդ Սրբազնութեան, Ֆիլատէլֆիա մեր եկեղեցւոյ շինութեան ճաշկերոյթին նախագահելու համար գտնուած միջոցին, Հոգաբարձութիւնս Ձեզի խնդրանք մը ներկայացուց Դպրապետի մը համար յանձին Յակոբ Փափազեանի: Ձերդ Սրբազնութիւնը համաձայն գտնուեցաւ անոր Ֆիլատէլֆիա փոխադրուելուն, եթէ կարելի ըլլար անոր դպրոցի խնդրը կարգադրել: Հոգաբարձութիւնս այդ հարցը կարգադրած է, եւ Յակոբը պիտի ընդունին յաջորդ տարուան համար:

Անշուշտ կարգ մը ձեւակերպութիւններ կան ըլլալիք որոնց դուք գիտակ էք ճիշտստի կը խնդրենք որ պէտք եղածը տնօրինէք անոր Ֆիլատէլֆիա Աստուածաբանական դպրոց արձանագրութեան համար:

Լիայոյս ենք որ Ձերդ Սրբազնութիւնը մեր խնդրանքին հայրաբար ընթացք կուտայ:

Կանխայայտ շնորհակալութեամբ եւ Լաւագոյն մաղթանքներով,

Մտտեւելով է համբոյր Ձեր Ս. Աշոյն
 Մնամք
 Որդեական սիրով եւ յարգանօք

Աւարդի Բեկ. Գաշըզճեան
 Սարգիս ԲՏՆՅ. Գաշըզճեան
 Հովիտ

Աւարդի Սարգիս Գաշըզճեան

Սարգիս Մանուկեան
 Ատենապետ

Տաճատ Ատենան
 Ատենապետ

Սարգիս Գաշըզճեան

Կարգադրեց Յ. Կրտսէան
Սարգիս Գաշըզճեան
 Ամեն

Թիւ 2003
Մարտ 21, 1961

Արժանաշնորհ
Տ. Սարգիս ԱՀՆՅ. Գաշըզնեան
Հոգեւոր Հովիւ եւ Նախագահ Միական Խորհուրդի
Ս. Երրորդութիւն Եկեղեցւոյ
Նորթ Ծիլատեւիքա.

Սիրելի Տէր Հայր.

Ատազած ենք Ձեր Մարտ 14 թուակիր նամակը, որով խնդրանք կը
ներկայացնէք Առաջնորդարանիս ուսանողներէն Տիրացու Յակոբ Փափազեան-
նը իրբի դպրապետ ունենալու եւ Ծիլատեւիքոյ Եպիսկոպոսական Եկեղեց-
ւոյ Աստուածաբանական Հեմարանը փոխադրուելու:

Նկատի ունենալով Ձեր եկեղեցւոյ համար վարժ դպրապետ մը ու-
նենալու կարիքը, այսու կ'արտօնենք Յակոբ Փափազեանի տեղափոխութիւնը,
թէեւ, ուսումնական տեսակէտով, բաւական դժուարութիւններ կան, ու անի-
կա միջեւ այս տարուան դպրոցական շրջանի վակուժը-Մայիսի վերջը-ըս-
տիպուած է նիւ Եորթ մնալ:

Ուստի, յառաջիկայ Յունիսէն սկսեալ՝ զինքը կը նշանակենք դպր-
ապետ Ձեր դպրոց դասին միջեւ որ աստուածաբանական ուսումը աւարտէ
եւ քահանայ ձեռնադրուելով՝ հովուական պաշտօն վարէ մեր թեմին մէջ:

Աստուած ենք թէ դուք եւ պատուարժան Միական Խորհուրդը հոգ պի-
տի տանիք իրեն, ու կը վարձատրէք իր ծառայութիւնը, որպէս զի շուտով
իբր ուսումը:

Յուսալով թէ Յակոբ Փափազեան պիտի աշխատի իր վրայ դրուած
յոյսերը արդարացնել՝ կազմակերպելով Ձեր դպրոց դասը եւ հսկելով եկե-
ղեցական կանոնաւոր երգեցողութեան:

Մնամք Տիրուանդ սիրոյ ողջունիւ
Աղօթաբար

ՍՈՌՆ ԱՐՔԵՊՈՍԿՈՍՈՍ
Առաջնորդ Հայոց Ամերիկայի

Թիւ 4894
Յունուար 29, 1963

Մեծայարգ
Տիար Սարգիս Մանուկեան
Ատենապետ Պատուարժան Միական Խորհուրդի
Ս. Երրորդութիւն Եկեղեցւոյ
Նորթ Ֆիլատելիա.

Սիրելի Տէր Սարգիս,

Նկատի ունենալով ձեր Հոգեւոր Հովիւ Արժանաշնորհ Տ. Սար-
գիս ԲՀՆՅ. Գաշըզեանի առողջական վիճակը եւ իր խնդրանքը՝ աւելի
փոքր ծուխի մը Հովուական պաշտօնը ստանձնելու, այսու կը Հաղոր-
դենք ձեզի թէ՛ Տէր Սարգիս Հովիւ նշանակած ենք Պրիճփորթի մեր
Համայնքին, եւ ընդառաջ երթալով ձեր փափաքին, Հոգեշնորհ Տ. Զաւէն
Վրդ. Արզումանեան առժամեայ Հոգեւոր Հովիւ կը կարգենք ձեր Համայն-
քին, որպէս զի միասնաբար աշխատիք եւ տարիներէ ի վեր ձեր ծուխին
ծրագրած նոր եկեղեցին կարենաք շինել եւ կազմակերպել Նորթ Ֆիլա-
տելիոյ մեր քարեպաշտ ժողովուրդը:

Հովուական այս փոփոխութիւնը տեղի պիտի ունենայ Փետրուար
ամսոյ կէսին վերջ:

Հաղորդելով զայս Պատուարժան Միական Խորհուրդիդ եւ մաղ-
թելով ձեզի յաջողութիւն ձեր եկեղեցաշէն գործին մէջ:

Մնամք Հայրական սիրոյ ողջունիւ
Աղօթարար

ՍԻՈՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ
Առաջնորդ Հայոց Ամենիշխանութեանի
եւ Գանատայի

Թիւ 4895
Յունուար 29, 1963

Հոգեշնորհ
Տ. Զաւէն Վրդ. Արզումանեան
Սիրազիւզ.

Սիրելի Հայր Զաւէն,

Ինչպէս բերանացի Ձեզի հաղորդած էի, այժմ ուրախ եմ պաշտօնապէս հաստատելու թէ Թեմական Խորհուրդը իր վերջին նիստին մէջ նկատի առաւ Ձեր դիմումը՝ ծառայելու մեր Թեմին մէջ, եւ իր հաւանութիւնը տուաւ Ձեր փափաքին:

Այսու, հաճոյքն ունիմ Ձեզի տեղեկացնելու թէ՝ ընդառաջ երթալով Նորթ Ֆիլատելիոյ Ս. Երրորդութիւն եկեղեցւոյ Միական Խորհուրդի խնդրանքին՝ Ձեզ կը նշանակենք առժամեայ հոգեւոր հովիւ նոյն համայնքին, նկատի առնելով իրենց այժմու հովիւ Տէր Սարգիս Բահանայի առողջական վիճակը, զինքը կը տեղափոխենք ուրիշ աւելի փոքրիկ փոքր ծուխ մը:

Նորթ Ֆիլատելիոյ մեր համայնքը քանի մը տարիէ ի մեր ձեռնարկած է նոր եկեղեցի մը կառոյցանելու աւելի հայաշատ եւ յարմար թաղի մը մէջ, ուր արդէն իսկ գնած է ընդարձակ հող մը: Կը յանձնարարենք որ պատուարժան Միական Խորհուրդին հետ միախորհուրդ զարկ տաք եկեղեցաւէժնութեան ձեռնարկին եւ փութով յաջողութեամբ պսակէք այդ յոյժ կենսական եւ աստուածահաճոյ գործը:


Նորթ Ֆիլատելիոյ հովուական Ձեր պաշտօնին պիտի սկսիք փետրուարի վերջերը:

Մաղթելով Ձեզի Աստուծոյ օգնականութիւնը եւ կատարեալ յաջողութիւն Ձեր եկեղեցանուէր ձեռնարկներուն.

Մնամք Տիրաւանդ սիրոյ ողջունիւ
Աղօթարար

ՍԻՈՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ
Առաջնորդ Հայոց Ամերիկայի
եւ Գաղտայի

ՄԲ. ԵՐՐՈՐԴՈՒԹԻՒՆ
ՀԱՅՑ. ԱՌԱՔ. ԵԿԵՂԵՑԻ
Ն. ՖԻԼԱՏԵԼՖԻԱ, ՓԱ.



Holy Trinity
Armenian Apostolic Church

North Philadelphia 22, Pa.

CHURCH PHONES

Hall: POplar 9-9230

Pastor's office: POplar 3-6807

Very Rev. Zaven Arsoumanian
Pastor

Եկեղեցւոյ Հեռաձայն
Մրահ՝ POplar 9-9230
Հովիւի Գրասենեակ՝ POplar 3-6807

Տ. Զաւէն Վրդ. Արզումանեան
Հոգեւոր Հովիւ

S. W. Corner

Susquehanna Avenue & Marshall Street

Ապրիլ 10, 1963

Մեծայարգ
Տիաք Մուրէն Մանուէլեան,
Դիւանապետ Ազգ. Առաջնորդարանի,

Նիւ Եորք

Սիրելի Կրն. Մանուէլեան,

Ստացած եմ Ձեր Ապրիլ 2 թուակիր նամակը եւ ներփակեալ հարցա-
րանը: Ձեր ակնարկած Փետրուար 8 թուակիր նոյն հարցարանի առաքումէն
Լուր չեմ ունեցած. հաւանաբար իմ քաղաքս հասնելէս առաջ ստացուած
ըլլալ իմ նախորդիս կողմէ: Յամենայն դէպս իմ ստացածս հարցարանը
փութով լեցնել տուի եւ զոր ներփակ կը սնանաք:

Բաց աստի, երէկ Հ. Կիւրեղի հետ կը խօսէի իրենց կատարելիք
հանգանակութեան առնչութեամբ. այս մասին զոյգ նուիրակներուն ստորագ-
րած նամակն ալ հասած է, ուք կ'ակնարկուի թէ Առաջնորդ Սրբազանին
յատուկ շրջաբերականը ստացած ըլլալու ենք: Նման շրջաբերական մը գոյու-
թիւնչունի մեր թղթածրարներուն մէջ եւ ժողովականք նախ կ'ուզեն պաշ-
տօնապէս իմանալ Առաջնորդ Սրբազանի շրջաբերականէն ինչ կը վերաբերի
յիշեալ հանգանակութեան:

Նաեւ Հայր Մուրբերու փափաքն է որ մեր եկեղեցւոյն կողմէ կատար-
ւելիք հանգանակութեան գործը կատարուի Սայիսի 5-ին: Այս թցւականը
անյարմար գտանք երէկի մեր Եխական նիստին, նկատելով որ նոյն օրը կարեւոր
պսակադրութիւն մը ունինք եւ որ հանգանակութեան գործին յաջող ելք մը
չապահովեր: Դնդրեմ այս պարագան հաղորդեցէք Հ. Կիւրեղին եւ նաեւ յիշեալ
շրջաբերականէն օրինակ մը բարի եղէք յղել մեզի:

Յաջողութեան մաղթանքներով եւ ողջունել
սիրոյ աղ. թարար,

Zaven Arsoumanian

Թիւ 6065
Ապրիլ 11, 1963

Հոգեշնորհ
Տ. Զաւէն Վրդ. Արզումանեան
Հոգեւոր Հովիւ Ս.Երրորդութիւն Եկեղեցւոյ
Նորթ Ֆիլատելֆիա.

Սիրելի Հայր Սուրբ,

Այսօր ստացուեցաւ Ապրիլ 10 թուակիր Ձեր նամակը եւ
անոր կցուած հարցարանը: Ենորհակալութիւն:

Առաջնորդ Սրբազան Հայրը, Երուսաղէմի Ս. Յարութեան
Տաճարի վերանորոգութեան համար բացուած հանգանակութեան կամ
նուիրահաւաքին առթիւ ոչ թէ շրջաբերական այլ կոչ մը ուղղած
էր "Ամերիկայի մեր սիրեցեալ ժողովուրդին": Այդ կոչը հրատա-
րակուեցաւ Հայ մամուլին մէջ: Օրինակ մը հանեցէք ներքակ
գտնել:


Զատկի առթիւ Հայր Նահէ եւ Հայր Կիւրեղ նուիրակները
քաղաքէն բացակայ են: Առաջինը կը գտնուի Տիթրոյթ, երկրորդը՝
Սիրազիւզ: Երբ վերադառնան, իրենց կը յայտնեմ Ձեր նամակին
այն հատուածը որ իրենց կը վերաբերի:

Ձեզի յայտնելով լաւագոյն բարեմազթանքներ Ս.Զատկի
առթիւ.

Մնամ սիրով եւ յարգանք

Սուրէն Մանուէլեան
Դիւանագետ

ՄԲ. ԵՐՐՈՐԴՈՒԹԻՒՆ
ՀԱՅՑ. ԱՌԱՔ. ԵԿԵՂԵՑԻ
Ն. ՖԻԼԱՏՆՎՅԻԱ, ՓԱ.



Holy Trinity
Armenian Apostolic Church

North Philadelphia 22, Pa.

CHURCH PHONES

Hall: POplar 9-9230

Pastor's office: POplar 3-6807

Very Rev. Zaven Arzoumanian
Pastor

Եկեղեցւոյ Հեռաձայն
Մրահ՝ POplar 9-9230
Հովիտի Կրտսեանակ՝ POplar 3-6807

Տ. Զաւէն Վրդ. Արզումանեան
Հոգեւոր Հովիւ

S. W. Corner

Susquehanna Avenue & Marshall Street

Քրդ. Մարտիրոսյե
Արզումանյե

Յուլիս 16, 1964

Գերաշնորհ

Տ. Միոն Ս. Արք. ~~Մանուկեան~~
Առաջնորդ Հայոց Հիւս. Ամերիկայի
եւ Նախագահ Թեմական Խորհուրդի
Նիւ Եօրք

Իմ եւ Եկեղեցւոյ Հոգաբարձութեան խնդրանքն է որ սոյն նամակը Ձեր
Սրբազնութեան կողմէ Թեմական Խորհուրդի յառաջիկայ նիստին ներկայաց-
ուի եւ անոր ընթացք տրուի: Այս որոշման յանգեցանք մեր Յուլիս 16-ի
ժողովին:

Քաղաքիս Հայ Եկեղեցիներու միացեալ Մշակութային Յանձնախումբը, որուն
մէջ կը հաշուուին երկու քոյր Եկեղեցիները, հայ բողոքական եւ կաթոլիկ
Եկեղեցիներն ու հայ առաքելական բաժանեալ Եկեղեցին, կը ծրագրէ Հայ
Մշակութի տօնը կատարել յառաջիկայ Հոկտեմբերին:

Ինչպէս տեղեկ էք, Սրբազան հայր, այս Յանձնախումբին Ս. Երրորդութիւն
Եկեղեցւոյ ներկայացուցիչները իրենց մասնակցութիւնը բերին բաւական
երկար խորհրդակցելէ ետք, սակայն առաջին եւ մէկ անգամուան համար միայն:

Արդ, կրկին հրաւիրած են մեզ իրենց ժողովներուն ներկայ գտնուելու եւ
գործակցելու յառաջիկայ Մշակութային Օրուան պատրաստութեան համար:
Հոգաբարձութիւնս համամիտ չէ ինքնագլուխ կերպով գործակցելու Յանձնա-
խումբի մը որ իր մէջ ունի մեր Եկեղեցւոյ բաժանեալ հատուածի մը ներ-
կայացուցիչները: Նաեւ չենք ուզեր որ երկու քոյր Եկեղեցիներ - Ս.
Մահակ-Մեսրոպ եւ Ս. Երրորդութիւն - իրարմէ տարբեր դիրք որդեգրեն այս
խնդրին առնչութեամբ:

Մեր խնդրանք է հետեւաբար որ Առաջնորդ Սրբազան հայրն ու Պատ. Թեմա-
կան Խորհուրդը տան մեզի իրենց Թեւադրութիւնն ու ուղղութիւնը. եւ եթէ
յարմար կը նկատուի նոյն ուղղութիւնը տրուի նաեւ քաղաքիս քոյր Եկեղեցւոյ:

Մատչելով ի համբոյր Ձեր Ս. Աշոյն
աղ. Թակից

Զաւէն Վրդ. Արզումանյե

Զաւէն Վրդ. Արզումանեան, հովիւ
եւ նախագահ Եթական Խորհուրդի

Թիւ 11541
Յունիս 30, 1964

Հոգեշնորհ
Տ. Զաւէն Լրդ. Արզումանեան
Հոգեւոր Հոգի Ս. Երրորդութիւն Եկեղեցւոյ
եւ նախագահ Պատուարժան Միական Խորհուրդի
Նորթ Թիլատելիոյ:

Սիրելի Հայր Զաւէն,

Ձեր Յունիս 16 թուակիր նամակը կարգացուեցաւ Թեմական Խորհուրդի
Յունիս 26ի նիստին մէջ, ինչպէս նաեւ Ռեւոյ Յիլատելիոյ Ե. Սահակ-Մեսրոպ
եկեղեցւոյ Միական Խորհուրդի նամակը Հայ Աշակոյթի տօնակատարութեան մա-
սին:

Թեմական Խորհուրդը այս հարցին շուրջ խորհրդակցել է եւս՝ հետեւեալ
որոշումը տուաւ գոր կը հազորդենք Ձեր սիրելութեան եւ Պատուարժան Միական
Խորհուրդին:

"Եկատի ունենալով որ Աշակոյթային Տօնը մեր Առաջնորդարանի տարե-
կան մեծագոյն ձեռնարկն է, եւ մեր թեմին մէջ բոլոր համայնքները կը կա-
տարեն Հայ Աշակոյթի Տօնը ի նպաստ Առաջնորդարանիս, կը յանձնարարենք որ
Կիլատելիոյ մեր գոյգ եկեղեցիները առանձին կամ միասնաբար նախաձեռնեն
Աշակոյթային Տօնակատարութիւնը՝ Առաջնորդարանիս հովանաւորութեամբ:"

Հազորդելով Պատուարժան Թեմական Խորհուրդի սոյն որոշումը ձեզի
եւ Ձեր Միական Խորհուրդին, վստահ ենք թէ պիտի շննաց Ձեր լուսագոյնը
կատարել զատշաճօրէն տօնախմբելու համար Հայ Աշակոյթի միսը, նիւթապէս
օժանդակելով Առաջնորդարանիս, ինչպէս սովոր են ընել մեր թեմի միւս
համայնքները, ըստ Թեմական Պատգամաւորական Ժողովի որոշման:


Սաղթելով ձեզի եւ Պատուարժան Միական Խորհուրդիդ յաշողութիւն:

Մեամբ Տիրաւանդ սիրոյ ողջունիւ
Աղօթարար

ՍՈՐՆ ԱՐԲԵՊՈՍԿՈՍՈՍ
Առաջնորդ Հայոց Ամբրիկայի
եւ Քանաւայի

ՄԲ. ԵՐՐՈՐԴՈՒԹԻՒՆ
ՀԱՅՑ. ԱՌԱՔ. ԵԿԵՂԵՑԻ
Ն. ՖԻԼԱՏԵԼՖԻԱ, ՓԱ.

Holy Trinity
Armenian Apostolic Church
North Philadelphia 22, Pa.



Եկեղեցւոյ Հեռաձայն
Մրահ՝ POplar 9-9230
Հովիտի Գրասենեակ՝ POplar 3-6807

CHURCH PHONES
Hall: POplar 9-9230
Pastor's office: POplar 3-6807
Very Rev. Zaven Arzoumanian
Pastor

S. W. Corner
Susquehanna Avenue & Marshall Street

Handwritten signature and date: 16 June 1964

Դեկտեմբեր 16, 1964

Գերաշնորհ
Տ. Սիրոն Սրբ. Արքեպս. Մանուկեան,
Առաջնորդ Հայոց Հիւս. Ամերիկայի եւ Նախագահ
Պատ. Թեմական Խորհուրդի,

Նիւ Եորք.

Գերաշնորհ եւ Սիրելի Սրբազան Հայր,

Երեկուան մեր Եխական ժողովի փափաքին համաձայն հետեւեալ խնդրանքը կը ներկայացնեմ Ձեր Սրբազնութեան եւ Պատ. Թեմական Խորհուրդին:


Ինչպէս ծանօթ է Ձեզի մեր համայնքի նոր եկեղեցիի և յարակից շէնքերու կառուցման գործը իր գործնական ընթացքը գտած էր. առ այդ Ձեր Սրբազնութիւնը տեղեակ պահուեցաւ վերջին շրջանին: Ծանօթ է նաեւ Ձեզի և Պատ. Թեմական ժողովին մեր համայնքին պատահած դժբախտութիւնը. բացատրած էի նախորդ նամակովս Ս. Երրորդութիւն Եկեղեցւոյ շէնքի հրկիզման պարագաները: Մեր հոգեւոր ու կրօնական պարտականութիւնները իրենց բնական ընթացքը վերըստացան. տար եկեղեցիի մը բարեցակամութեան շնորհիւ:

Մեք փափաքն է որ Թեմական Խորհուրդի Դեկտ. 17ի նիստը նկատի առնէ մեր նոր ծրագիրներու պարագան և անյապաղ տայ իր հաւանութիւնը, եթէ սոյն նամակը ժողովէն առաջ հասնի Ձեր ձեռքը: Տարիներ առաջ գնուած հողի մեր կալուածին վրայ պիտի շինուին Հայ Եկեղեցւոյ - հայկական կրօնական ճարտարապետութեամբ - Կիրակնօրեայ Դպրոցի և մշակութային սրահի շէնքերը, ճարտարապետութեամբ աշխարհածանօթ Գլճեան Գործակալութեան: Ձեր Սրբազնութիւնը արդէն անձնապէս տեսած է ու քննած բոլոր յատկապիճներն ու բացատրութիւնները: Դժբախտաբար մեր ձեռքին տակ ունեցած բոլոր գծագրութիւններն ու բացատրագրերը այրեցան անցեալ շաբաթներու և կարելի չեղաւ ներկայանալի օրինակներով անձնապէս գալ և խորհրդակցիլ Պատ. անդամներուդ հետ: Անշուշտ կարելի կրնայ ըլլալ օրինակներ գտնել Գլճեան Գրասենեակէն. սակայն այդ եւս պիտի պահանջէ ժամանակ: Հետեւաբար կը խնդրենք որ սոյն նամակը, ինչպէս նաեւ Առաջնորդ Սրբ.ին ղրկուած նախկին բացատրագիրն ու շինութեան ներուն ընդհ. պատկերը առ այժմ գոհացնեն Պատ. ժողովը տալու համար համապատասխան վաւերացում: Երազրած ենք հողի օրհնութիւնը կատարել Ծուռուարի վերջերուն ու անմիջապէս սկսելու շինութեանց գործին:

Ինչպէս ըսի վերեւը, երեք բաժիններ պիտի ունենանք.-

1. Հայկական ճարտարապետութեամբ Եկեղեցի մը, շուրջ 230 ակրոններով. առաւել 50 ակրո վերնատան մէջ: Լրիւ քարաշէն:
2. Կիրակնօրեայ Դպրոցի բաժին, եկեղեցւոյ տակը, 12 դասարաններով. իրեն յատուկ լուացարանային և այլ յարմարութիւններով: Դասարանները բեմն պիտի ծառայեն իբր ժողովասրահներ:

ՄԲ. ԵՐՐՈՐԴՈՒԹԻՒՆ
ՀԱՅՑ. ԱՌԱՔ. ԵԿԵՂԵՑԻ
Ն. ՖԻԼԱՏԵԼՖԻԱ, ՓԱ.



Holy Trinity
Armenian Apostolic Church

North Philadelphia 22, Pa.

CHURCH PHONES
Hall: POplar 9-9230
Pastor's office: POplar 3-6807

Very Rev. Zaven Arzoumanian
Pastor

Եկեղեցւոյ Հեռաձայն
Մրահ՝ POplar 9-9230
Հովիտի Գրասենեակ՝ POplar 3-6807

Տ. Զաւէն Վրդ. Արզումանեան
Հոգեւոր Հովիւ

S. W. Corner

Susquehanna Avenue & Marshall Street

- 2 -

3. Համայնքի Սրահ, եկեղեցւոյ կից, որ պիտի ունենայ 400⁺ չորս հարիւր-հոգիի համար տեղ ճաշկերոյթի մը ընթացքին: Այս սրահն ու կիրակն-Դպրոցի բաժինը իրարու հաղորդակից պիտի ըլլան խոհանոցով եւ գրխաւոր ,, Լապիով,, մը:

Այս ընդհանուր ծրագիրը յայտնի եղաւ ու պիտի արժէ 400,000.00 -չորս հարիւր հազար տոլարի գումար մը: Մեր անդամական ժողովներուն առնուեցաւ հաւանութիւն զայն իրագործելու համար: Շատ հաւանական կը թուի թէ ի վիճակի պիտի ըլլանք նախ կառուցանելու առաջին երկուքը, այսինքն եկեղեցի եւ յատակի Դպրոցի բաժինը, որոնք պիտի արժեն 325,000.00 տոլար: Մեր նիւթական վիճակը, ըսել կ'ուզեմ Շինթ. Յնձնի.ի սնտուկը, բաւական խօսուիւ եւ քաջալերական կ'երեւի: Այս առաջին մասը մինչ կը յառաջանայ կրնանք որոշել թէ սրահն ալ կրնանք միւսնոյն ժամանակ ունենալ թէ ոչ:

Շատ ամփոփ կերպով այս է մեր ծրագիրներուն պատկերը: Կը խնդրենք Առաջնորդ Սրբազանէն եւ Պատ. Թեմական Խորհուրդէն զայր ընդունելու որպէս ,, տեղեկագիր,, նկատի ունենալով մեր ծոխի տակաւին միացող վիճակը ուր կ'ընդունեցան մինչեւ իսկ եկեղեցւոյ մատենաներն ու Ձեզի այսօր ներկայացուելիք շինութեանց վաւերաթուղթերը: Կը վստահեցնենք նաեւ թէ օր մը կարող պիտի ըլլանք Ձեր տրամադրութեան տակ դնել այն ինչ որ անհրաժեշտ կը նկատէք որպէս տեղեկագիր կամ վաւերագիր:

Զայս կը հաղորդեմ Ձեր Սրբազանութեան ի տեղեկութիւն եւ ի վաւերացումն մատչելով ի համբոյր Ձեր Աջին,

Zaven Arzoumanian

Զաւէն Վրդ. Արզումանեան, Հովիւ

ՀԱՃԵՑԻՔ ՅԵՏ ԱՅՍՈՐԻԿ ԳՈՐԾԱՅԵԼ
ՀԵՏԵԻՆԱԼ ՀԱՍՑԻՆ:-

Very Rev. ZAVEN ARZUMANIAN,
1371 Unruh Ave.,
Philadelphia 11, Penna.

ՍՐ. ԵՐՐՈՐՈՒԹԻՒՆ
ՀԱՅՏ. ԱՌԱՔ. ԵԿԵՆՅԻ
Ն. ՅԻԱՏՆՆՅԱՒ, ՓԱ.



Holy Trinity
Armenian Apostolic Church

CA 4-7444 (Church)
RA 5-6999 (Res.)
Very Rev. Zaven Arzoumanian
Pastor

Տ. Զաւէն Վրդ. Արզումանեան
Հոգեւոր Հովիւ

Home For Orphans of Odd Fellows
6421 Ogontz Ave., Phila. Pa. 19126

Սեպտեմբեր 20, 1965

Յարգելի եւ Սիրելի
Պրն. Մանուէլեան,

Կարիքը ունինք Մկրտութեան Պսակի վկայականներու
որոնց ի պահ դրուած մասը այրեցաւ հրդեհին ժամանակ. առ
ձեռն ունեցածներս ալ սպառեցան: Եթէ կը հաճիք զանոնք
դրկեցէք կարելի փութով:

Մեր Նոր Եկեղեցոյ հիմնարկէքը տեղի կուսենայ յառաջիկայ
Կիրակի. հրամայեցէք եկէք ու պատուեցէք մեզ Զերուներկայութեամբը:
Ներփակ ստացէք պատուոյ տոմս մը ծանուցագրին հետ միասին:

Սիրոյ ողջունիւ աղօթարար,

Zaven Arzoumanian

Զաւէն Վրդ. Արզումանեան, Հովիւ

Սեպտեմբեր 22, 1965

Հոգեշնորհ
Տ. Զաւէն Կրդ. Արզումանեան
Հոգեւոր Հովիւ Ս. Երրորդութիւն Եկեղեցւոյ
Նորթ Թիլասելիա.

Սիրելի Հայր Սուրբ,

Այսօր առանցին ծրարով Ձեզի դրկուեցան Մկրտութեան եւ Պսակի վկայականներու արակներէն մէյ մէկ հատ:

Արտագին շնորհակալութիւն Ձեր ուղղած հրաւերին եւ տոմսակին համար: Ետ պիտի ուզէի անձամբ ներկայ ըլլալ (կտրելի նաեւ հոգեպէս այս ինչ հեռաւոր տեղը օսնուիլ) Ձեր նոր եկեղեցւոյ հիմնարկէքի արարողութեան, յառաջիկայ կիրակի, սակայն, ինչպէս գիտէք, այն օր Հ. Ե. Ե. Ազգականութեան նախածեռնած ուխտաւորութեան խումբը պիտի մեկնի դէպի Ս. Էջմիածին: Ժրագրած եմ ընկերանալ խումբին մինչեւ օդանավակայանը, թէ Շամբու դնելու գիրենք յանուն Առաջնորդարանի պաշտօնէութեան եւ թէ նկարագրականի մը նիւթեր քաղել` "Հայաստանեայց Եկեղեցի"ի համար:

Ուստի, Ձեր ներողամտութիւնը խնդրելով, կ'ուզեմ աչքի լոյսի մաղթանքներս ու խնդակցութիւնս յայտնել Ձեզի եւ պատուաժան ծեական Խորհուրդին Ձեր եկեղեցւոյ հիմնարկէքին առթիւ: Ամենքիդ միասնական ջանքերով ահա կիրականանայ Ձեր համաձայնքին երկար տարիներէ ի վեր փայփայած զեղեցիկ երազը` ահա փառաւորապէս կանգնեցնելով եկեղեցիին աղուոր շէնքը, ընդարձակ սրահով մը հանդերձ:

Մնամ սիրով եւ յարգանքօք

Սուրբն Սանուէլեան

ՄԲ. ԵՐՐՈՐԴՈՒԹԻՒՆ
ՀԱՅՑ. ԱՌԱՔ. ԵԿԵՂԵՑԻ
Ն. ՅՈՒԱՏՆԻՅԱՆ, ՓԱ.



Holy Trinity
Armenian Apostolic Church

Տ. Զաւէն վարդ. Արզումանեան
Հոգեւոր Հովիւ

CA 4-7444 (Church)
RA 5-6999 (Res.)
Very Rev. Zaven Arzoumanian
Pastor

Home For Orphans of Odd Fellows
6421 Ogontz Ave., Phila. Pa. 19126

ՅՈՒՆԻՍ 18, 1965

Մեծայարգ
Տիար Սոուրէն Մանուէլեան,
Դիւանապետ Հայոց Առաջնորդարանի,

ԿԻԼ ԵՈՐՔ

Սերէլի Պրն. Մանուէլեան,

Ես կը խորհէի թէ ցարդ ղրկած էի Նիսիական Խորհուրդի մեր
վերջին ընտրութեանց արդիւնքները եւ նաեւ նոր դիւանի անդամները:
Հիմա Լսեցի թէ հեռաձայներ էք եւ հարցուցեր այդ մասին:

Նոր դիւանի անդամները գրեթէ նոյնութեամբ մնացին:
Ատենապետ Պրն. Սարգիս Մանուէլեան.
Փոխ Ատենապետ Պրն. Ճորճ Մերանշեան
Գարտուղար Պրն. Կարապետ Բէշկէկեան
Գանձապահ Պրն. Արա Բարուսակեան:

Կը յուսամ կը գոհացնէ Ձեզ սոյն տեղեկութիւնը:

Առաջնորդ Արքեպիսկոպոս Հօր փառաբան համաձայն այս տարի եւս
պատրաստեցի 1966 տարուան պատի օրացոյցը. մի քանի օրէն բոստին կը
յանձնեմ:

ՊԱՅՔԱՐԻ մէջ հաճոյքով կարդացի Ձեր բանաստեղծօրէն ներշնչեալ
գրութիւնը Մայր Տաճարի հողի օրհնութեան մասին. հոն կար ամէն ինչ,
համբոյր, ճաշակ եւ տոհմիկ շունչ մը. Առաջնորդ Արքեպիսկոպոս իսկ այդ
գրութեան մէջ զգեցած էր մասնաւոր հանդերձանք:

Մեր մեծ գործը այժմ եկեղեցւոյ շինութեան գործն է:
Հինգ Վաթնիկներէ ի վեր գործաւորներ կաշխատին: Հիմերը փորուեցան,
սիւները կանգնեցան: Երբ առաջին յարկի տանիքը պատրաստուի պիտի կա-
տարենք հիմնարկէքի արարողութիւնը. շատ հաւանաբար Սեպտեմբերի մէջ:

Առողջութեան եւ յաջողութեան Լաւագոյն մաղթանքներով

արթարար, Զաւէն վարդապետ,
Հովիւ

Յուլիս 1, 1965

Հոգեշնորհ

Տ. Զաւէն Վրդ. Արզումանեան
Հոգեւոր Հովիւ Ս. Երրորդութիւն Եկեղեցւոյ
Նորթ Ֆիլատելֆիա.

Սիրելի Հայր Սուրբ,

Պիղիս տառերը կը յայտնեն թէ նոր գիրի մեքենայով կը գրուի աս երկտողը՝ Ձեզի բերելու իմ շնորհակալութիւնս այն աղուոր ուշադրութեան համար զոր ընծայած էիք "Պայքար"ի մէջ երեւցած իմ մէկ շորիկ մրոտումին: Իմ սա ու նա ՆԼՈՅԹները հեռուէն այդպէս ջերմագին գնահատուելը պէտք է ըսել թէ ուրախութիւն կը պատճառէ ինձի: Ուրեմն, թող պայծառ մնայ Ձեր կանաչ արեւը:

Հիմա կախօրանէն վար իջնելով, ըսեմ որ Ձեր դիւանի կազմին ցանկը մեզի տրամադրելով զո՞հ մնացինք: Իսկ անցեալ օր Հայր Եղիշէն ըսաւ թէ արդէն ստացած էր Ձեր պատրաստած 1966 տարուան պատի օրացոյցը եւ իսկոյն տպարան պիտի տանէր շարուելու համար: Ասիկա արդէն իրաւունք կու տայ սեղան շտկելու, ինչոյքի նստելու, փառաբանելու մեր գործերուն այսպէս կանուխէն կարգի դրուած ըլլալը՝ շնորհիւ Ձեզի նման այնքան պարտաճանաչ եւ փութաշան բարեկամի բերած գնահատելի գործակցութեան: Ուրեմն, դարձեալ շնորհակալութիւն:

Ձեր կարծած հեռաւոր Սեպտեմբերը ահա կարծես երկու քալլափոխ անդին կանգնած, նազանքով կը սպասէ որ ծնծղայով ու թմբուկով դիմաւորութեան ելլենք: Ուրեմն, ահա երրորդ անգամ ըլլալով կը գործածուի աս բառը սա կարճ տողերու երկայնքին, կրնաք յուսալ թէ շինութիւնը արդէն սկսած եկեղեցիին հիմնարկէքին արարողութեան եւ հանդիսութեանց ալ պիտի ներկայ ըլլանք ծիրանաւոր իշխանին հետ, մասնակից ըլլալու Ձեր ուրախութեան: Ու այսպէս դեռ վկաները պիտի ըլլանք մեծ իրազործումներու, սքանչելագործութիւններու, ինչպէս եռանդով կը սիրէր ըսել Լուսահոգի Գէորգ Զ. Կաթողիկոս...

Ողջութեան եւ ուրախութեան սրտագին բարեմաղթանքներով եւ

սիրով ու յարգանօք

Սուրէն Մանուէլեան